

Իշխանութիւնները մտադիր են Ջարուհի Փոստանջեանի հեռացնել ԵԽԽՎ-ի Հայաստանի պատուիրակութեան կազմէն

Հայաստանի Խորհրդարանի Ընդդիմադիր «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Ջարուհի Փոստանջեան դիմած է Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) կանոնակարգի յանձնաժողովին՝ տեղեկացնելով, որ Հայաստանի Ազգային ժողովի նախագահը կ'ուզէ զինք հեռացնել հայկական պատուիրակութեան կազմէն՝ նախագահի Սերժ Սարգսեանին ուղղած հարցումին պատճառով:



Հայաստանի եւ Եւրոպայի Խորհրդարաններու անդամ Ջարուհի Փոստանջեան

Անցեալ շաբաթ, ԵԽԽՎ-ի նիստի ընթացքին Հայաստանի նախագահին խօսք ուղղած էր նաեւ Հայաստանի պատուիրակութեան անդամ Ջարուհի Փոստանջեան՝ յայտնելով, որ Սերժ Սարգսեան ընտրուած է ոչ թէ հայ ժողովուրդի կամ քով, այլ կազմակերպուած յանցագործութեան հետեւանքով եւ թէ նախագահը չի կրնար ներկայացնել հայութեան կամքը: Այնուհետեւ ան հարցում ուղղած էր Սերժ Սարգսեանին, վերջերս Եւրոպայի քաղաքներէն մէկուն մէջ, 70 միլիոն եւրօ կորսնցուցած ըլլալու մասին: Այս հարցումին ի պատասխան Սարգսեան ըսած էր, «Ես խորապէս համոզուած եմ, Տիկին Փոստանջեան, որ ներկայացնում եմ հայ ժողովուրդին եւ դրանով հպարտ եմ: Յաւոք սրտի, ձեր թեկնածուն չկարողացաւ նախագահական ընտրութիւններում ցուցաբերել այնպիսի որակներ, որ-

պէսզի կարողանայ ներկայացնել հայ ժողովուրդին: Ձեր ասածը՝ կապուած քաղաքացի հետ, ես երբեք չեմ եղել Եւրոպայում որեւէ քաղաքացի, ես չեմ խաղում քաղաքացիներում, ես, ցաւօք սրտի, հնարաւորութիւն չունեմ տնօրինելու 70 միլիոն եւրօ: Եթէ այդպիսի հնարաւորութիւն ունենայի, մի մասը ձեզ կը նուիրէի, որպէսզի կեանքից գոհ լինէիք եւ այդքան չարութիւն ձեր մէջ չկուտակուէր: Հաշուէք, որ ես ձեզ չեմ պատասխանել», - պատասխանած էր Սերժ Սարգսեան:

Շաբ.ը էջ 4

Հաստատուեցաւ Այցագրի Ռեժիմի Դիւրացման Մասին Համաձայնագիրը Եւրամիութեան եւ Հայաստանի Միջեւ



Էդուարդ Նալբանդեան-Քեթրին Էշթընի հանդիպումը Պրիւսսիա մէջ

Եւրասիոյ Խորհրդարանը, Հոկտեմբեր 9-ին Պրիւսսիա մէջ կայացած լիազուգումար նստաշրջանի ընթացքին հաստատեց Եւրամիութեան եւ Հայաստանի միջեւ մոտաքի այցագրի ռեժիմի դիւրացման համաձայնագիրը:

«Մոտաքի այցագրի դիւրացումը կ'օգնէ նոր շունչ հաղորդել համագործակցութեան, մասնաւորապէս՝ կը բարձրացնէ քաղաքացիներու տեղաշարժի հնարաւորութիւնը», ըսուած է փաստաթուղթին մէջ:

արտակարգ պարագաներուն՝ 2-3: Հայաստանի քաղաքացիներու համար այցագիրը կ'արժէ 35 եւրօ (բնակչութեան որոշ շերտերու համար, մասնաւորապէս՝ պաշտօնական պատուիրակութեան անդամներու մօտ հարազատներ, ուսանողներ, ուսուցիչներ, գործարարներ, գիտնականներ, կը կրճատուի անհրաժեշտ փաստաթուղթերու ցուցակը):

Նոր կանոնները կ'արագացնեն այցագրի տրամադրման ընթացակարգը, որոշումը կը կայացուի 10 օրուայ ընթացքին, իսկ

Միաժամանակ Խորհրդարանականները յիշեցուցած են, որ Յունուար 10-ին ուժի մէջ կը մտնէ Հայաստանի կառավարութեան որոշումը՝ ԵՄ երկիրներու եւ Շէնկեն-

Շաբ.ը էջ 5

Տիգրան Առաքելեանը տակաւին կը մնայ անազատութեան մէջ



Ոստիկանը դատարանին մէջ նշանակալի քննութիւն կը գործածէ Առաքելեանի դէմ

Հակառակ Հայաստանի անկախութեան 22-ամեակին առթիւ յայտարարուած համաներուամին, Հայ Ազգային Կոնգրէսի (ՀԱԿ) ակտիւիստներու գործով ամբաստանուած Տիգրան Առաքելեան կը մնայ բանտարկուած:

Հոկտեմբեր 9-ի դատաքննութեան ընթացքին, երբ կողմերուն առաջարկուեցաւ հանդէս գալ ճառով, երկու տարի անազատութեան

մէջ գտնուող Տիգրան Առաքելեանի պաշտպան Մուշեղ Շուշանեան փորձեց մինչ պաշտպանական ճառի պատրաստումը իր պաշտպանեալի խափանման միջոցը փոխարինելու միջնորդութեամբ հանդէս գալ՝ նկատի առնելով օրերս ընդունուած համաներումը: Սակայն նիստը նախագահող դատա-

Շաբ.ը էջ 4

Հայաստանի լրատուամիջոցները ազատութեան առումով Արեւելեան գործընկերութեան երկիրներուն մէջ կը գրաւեն երրորդ դիրքը

Արեւելեան գործընկերութեան երկիրներու մէջ լրատուամիջոցներու ազատութեան առումով առաջին դիրքի վրայ է վրաստանը: Նման եզրակացութեան հանգած են այս հարցը ուսումնասիրողները, որոնք արդիւնքները ներկայացուցած են Քիշնեւի մէջ կայացած քաղաքացիական հասարակութեան համաժողովի ընթացքին:

Երկրորդ տեղը կը գրաւէ Մոլդովան, որուն կը յաջորդեն Հայաստան, Ուքրանիա եւ Ատրպէյ-

ճան: Վերջին տեղ կը գրաւէ Պեւրուսը, որ ստացած է 414 միաւոր: Համեմատութեան համար՝ Վրաստան ստացած է 1222 միաւոր:

Ուսումնասիրութիւնը ընդգրկած է Մարտ-Յունիս ժամանակահատուածը եւ կը վերաբերի Արեւելեան գործընկերութեան երկիրներուն:

Մասնագէտները նշած են, որ միայն խօսքի ազատութիւնն է որ նկատի առնուած է, եւ ոչ թէ լրագրութեան որակը:

Հ.Մ.Ս.ական Յովիկ Կարդացողեան (Օքլոնուշեան) Ձոռ Գացած է Դամասկոսի մէջ տեղի ունեցած պայթումին

Կիրակի, Հոկտեմբեր 6-ին Դամասկոսի Ապպասիին, Քասսա եւ Պապ թումա թաղամասերուն վայ կատարուած հրթիռակոծման հետեւանքով, արձանագրուած են 8 զոհեր, որոնց շարքին, Հ.Մ.Ս.-ական գործունեայ ընկերներէն 1958-ի ծնունդ, դամասկոսահայ Յովիկ Կարդացողեան (Օքլոնուշեան), որ կը գտնուէր Քասսայի յոյն ուղղափառներու Ս. Խաչ եկեղեցւոյ մօտակայքը: Պայթումի հետեւանքով եկեղեցիէն բացի նիւթական ծանր վնասներ կրած են նաեւ հայաբնակ թաղի ինքնաշարժներն ու բնակարանները:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՄՍԻՍ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՔԱՐԵՐ ՆԵՏԵԼՈՒ ԵՒ ՀԱԻՎՔԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՀՀ նախկին վարչապետ, Մեծ Բրիտանիայում եւ Հիւսիսային Իռլանդիայում Հայաստանի դեսպան նշանակուած Արմէն Սարգսեանի նորից վարչապետ դառնալու թեման կարծես դեռ փակ է:

Քաղաքական շրջանակներում անգամ չեն բացառում մօտ ապագայում Արմէն Սարգսեանի վարչապետ դառնալու հաւանականութիւնը եւ քաղաքական վերջին իրողութիւնները դրա հանգուցալուծմանը միտուած քայլեր դիտարկում:

Այս համատեքստում առաջիկայում նոր թարմութեամբ կը չիշեն Տիգրան Սարգսեանի անուան հետ կապուած եւ կարծես պատմութեան գիրկն ուղարկուած օֆշորային աղմկայարոյց պատմութիւնը: Չնայած այն բանի, որ Տիգրան Սարգսեանը բաւական հմտօրէն խմբագրեց Մաքսային միութեանն անդամակցելու վերաբերեալ իր նախնական տեսակէտը, համաձայն որի ընդհանուր սահմանի բացակայութիւնն անհնարին է դարձնելու Հայաստանի անդամակցութիւնը այդ միութեանը, աւելին՝ հենց նա ստանձնեց ղեկավարել Մաքսային միութեանը ՀՀ միացման գործընթացները համակարգող յանձ-

նարկարգումներին, նկատելի է, որ Տիգրան Սարգսեանը, ինչպէս նաեւ վարչապետի պաշտօնի հաւակնորդները առանձնապէս հեռու չեն մնում աղմկայարոյց պատմութիւններից: Բոլորովին վերջերս հայրենի խորհրդարանում Տիգրան Սարգսեանը, օրինակ, ՀԱԿ պատգամաւոր Արամ Մանուկեանի հարցմանն ի պատասխան վեցամսեայ լուծութիւնից յետոյ գաղտնագրեց, որ իրականում գոյութիւն չունի «Գազպրոմի» հետ գազի գնի վերաբերեալ թանկացման պայմանագիր, ինչը պարզապէս խայտառակութիւն է: Կը նշանակի, որ կառավարութիւնը ամիսներ շարունակ գործել է ապօրինի եւ գազի գինը բարձրացրել առանց պայմանագրի: Դժուար է հաւատալ, որ վարչապետն ինքնակամ նման «անմեղ» խոստովանումով հանդէս եկաւ, հարցն ամիսներ շարունակ էր հետաքրքրում ընդդիմադիր պատգամաւորներին, մինչդեռ վարչապետը եւ կառավարութիւնն ամէն անգամ շրջանցում էին այն, ինչը կարող էին անել նաեւ հիմա: Այս համատեքստում ուշագրաւ է նաեւ Աժ նախագահ՝ Յովիկ Աբրահամեանի դէմ սկսուած արշաւը:

Տպաւորութիւնն այնպիսին է, որ Հայաստանում տեղի ունե-

ԵՆԻՎ ամբիոնից Սերժ Սարգսեանին «ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Չարուի Փոստանցեանի ուղղուած հարցը՝ կազինոյում 70 մլրդ եւրօ գումար տարուելու մասին, ըստ շահագրգիռ մամուլի ներկայացման, կրկին Յովիկ Աբրահամեանի առ Սերժ Սարգսեան դաւադրութիւնների շարքից է

նաժողովը, սրան գումարած՝ չնայած այն լուրերի, որ իրականում գործող վարչապետը երբեք չի գործել ընդդէմ Ռուսաստանի եւ իրականում համարուել է Ռուսաստանի շահերը ներկայացնող հայաստանեան գործիչ, այդուհանդերձ Սերժ Սարգսեանը որոշել է վարչապետի պաշտօնում նշանակել որոշ տեղեկութիւններով ամբողջութեամբ Ռուսաստանի յատուկ ծառայութիւնների ուշադրութեան ներքոյ գործող Արմէն Սարգսեանին: Պատահական չեն վերջերս մամուլի հրապարակումները, համաձայն որոնց՝ Արմէն Սարգսեանը պատրաստուած է աւելի ակտիւ դերակատարում ունենալ Հայաստանի ներքաղաքական կեանքում եւ 2018թ. դառնալ Սերժ Սարգսեանի ժառանգորդը:

Ըստ նոյն տեղեկութիւնների՝ դեսպանի պաշտօնում վերանշանակուելուց յետոյ Տիգրան Սարգսեանը այդ նշանակումը համարում է հենց իր շահերին հարուածող քայլ եւ մտադիր է առաջիկայում իրեն սպասարկող լրատուամիջոցներով լայնածաւալ քարոզչական արշաւ սկսել ընդդէմ Արմէն Սարգսեանի, աւելին՝ արդէն իսկ սկսել է: Ընդհանրապէս, հետեւելով քաղաքական դաշտում տեղի ունեցող վեր-

ցող դաւադրութիւնների միակ «գիտակց» եւ կատարածուն Աժ ղեկավարն է: ԵՆԻՎ ամբիոնից Սերժ Սարգսեանին «ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Չարուի Փոստանցեանի ուղղուած հարցը՝ կազինոյում 70 մլրդ եւրօ գումար տարուելու մասին, ըստ շահագրգիռ մամուլի ներկայացման, կրկին Յովիկ Աբրահամեանի՝ առ Սերժ Սարգսեան դաւադրութիւնների շարքից է: Քանի որ Չարուի Փոստանցեանին հարցի իր իրաւունքը զիջել է Յովիկ Աբրահամեանի ազդեցութեան ոլորտում գործող Արմիսի Յովհաննիսեանը: Այսպիսով, վարչապետի պաշտօնի իրական հաւակնորդներին վարկաբեկելուց յետոյ միայն Սերժ Սարգսեանը Արմէն Սարգսեանին կը ներկայացնի իբրեւ վարչապետի իդեալական թեկնածուի: Թեթեւ անհասկանալի է մնում՝ այդ դէպքում նախագահն ինչո՞ւ Արմէն Սարգսեանին նորից վերանշանակեց դեսպանի պաշտօնում, սակայն պատասխանը պարզ է՝ այդպիսով գնահատուեց եւ ընդգծուեց Սարգսեանի կատարած արդիւնաւէտ աշխատանքը՝ այդչափ պատասխանատու երկրներում Հայաստանին լաւագոյնս ներկայացնելու հարցում:

«ՀԱՅԵԼԻ»

ՍԵՐՇ ՍԱՐԳՍԵԱՆԸ ՄՊԱՍՈՒՄ Է ԱՄԵՐԻԿԱՅԻ ՕԴԱՉՈՒՆԵՐԻՆ

ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ

Տարիներ առաջ հայկական մամուլն անդրադարձել էր մի իրադարձութեան, երբ Ռոբերտ Քոչարեանն ընդունել էր ամերիկացի սովորական օդաչուների, որոնք Հայաստան էին ժամանել Պաշտպանութեան Նախարարութեան ինչ որ ծրագրի շրջանակում: Մամուլը գրել էր, որ Քոչարեանի ներքին ու արտաքին քաղաքականութեան հետեւանքով Հայաստանն այնքան է մեկուսացել եւ յայտնուել Ռուսաստանից կախուածութեան մէջ, որ այլեւս Արեւմուտքից բարձր մակարդակի պատուիրակութիւններ չեն ժամանում: Չհաշուած Քոչարեան-Պուտին, եւ ԱՊՀ նախագահների բազմաթիւ հանդիպումները:

Սերժ Սարգսեանը, անցնելով իշխանութեան, փորձեց ընդգծել իր տարբերութիւնը նախորդից, այցեր կատարեց Արեւմուտքի երկրներ եւ ընդունուեց ամենաբարձր մակարդակով: Բարձր մակարդակի այցեր եղան նաեւ Հայաստան: Իսկ նրա արտգործնախարարը՝ Էդուարդ Նալբանդեանը, գրեթէ Երեւանում չէր լինում, եւ որպէս իր գործունէութեան արդիւնք՝ հաշուետուութիւններում հպարտութեամբ նշում էր այցերի ու տուած հարցազրոյցների քանակը:

Հայաստանի արտաքին քաղաքական այս «ակտիւութիւնը» եւ մի շարք մասշտաբային ծրագրերը կարծես թէ հետաքրքրել էին Արեւմուտքին: Մասնաւորապէս ԱԼԳ շրջանակում Եւրամիութեան հետ աստիճանային, որի վերաբերեալ 3,5 տարի բանակցութիւններ էին ընթանում: Մի խօսքով, գոնէ առեւտրային տեղի էր ունենում արտաքին քաղաքական ու տնտեսական դիւերսիֆիկացիայի գործընթաց, որի ընթացքում Հայաստանի իշխանութիւնը փորձում էր լուծել իր արտաքին լեզբի մտութեան խնդիրը:

Սակայն, Սեպտեմբերի 3-ին Մաքսային Միութեանն անդամակցելու մասին որոշումով այս գործընթացն աւարտուեց: Սեպտեմբերի 3-ից յետոյ արդէն նկատելի է, որ Սերժ Սարգսեանը սկսել է ինտենսիւօրէն ընդունել Ռուսաստանեան գանազան պետական եւ մասնաւոր պատուիրակութիւններ, շնորհաւորել Ռուսական երկրորդական պաշտօնեաների, եւ հեռու չէ այն օրը, երբ ստիպուած կը լինի ընդունել արդէն «ամերիկացի օդաչուներին»:

Բանն այն է, որ Ռուսաստանի «ծիրում» չկայ լեզբի մտութեան եւ ինքնիշխանութեան խնդիր. ինչպէս ժամանակին դիպուկ նկատել էր մի վերլուծաբան, ԱՊՀ-ն ոչ լեզբի մտութեան հարցն ակումբ է: Քիչ ինչ զարգացնելով այս միտքը, կարելի է նշել, որ այս համակարգում պէտք է լինի մէկ «լեզբի մտութեան» նախագահ: Ռուսաստանի նախագահը, եւ «տեղապահներ», որոնք ոչ միայն չունեն լեզբի մտութեան անհրաժեշտութիւն, այլեւ պէտք է հնարաւորինս ոչ լեզբի մտութեան «մտորոպողայի» «լեզբի մտութիւն» ընդգծելու համար: Նրանց տեղը հիերարխիայում բաւական ցածր է:

Փոխարէնը, Արեւմտեան համակարգում առաջին տեղում է լեզբի մտութեան խնդիրը: Ընդ որում, լեզբի մտութիւնը չի սահ-

մանափակում միայն ընտրական գործընթացներով: Այն առաւել լայն հասկացութիւն է եւ եւթադրում է նաեւ ներքին ու արտաքին համարժէք քաղաքականութիւն, բազմակողմանի միջազգային համագործակցութիւն, որի արդիւնքում տուեալ երկիրը ձեռք է բերում որոշակի տեղ ու դեր աշխարհաքաղաքական զարգացումներում:

Ռուսաստանի «ծիրում» նման խնդիր չկայ, այստեղ բացառում է երկրների որեւէ ինքնուրոյն դերը միջազգային գործընթացներում, այլ միայն՝ միջնորդաւորում:

Իսկ մասնաւորապէս Հայաստանի դէպքում խնդիրն առաւել քան պարզ է. այն պէտք է լինի էքսկլուս, որը պէտք է ապահովի Ռուսաստանի համար կենսական նշանակութեան «եռանկիւնին» չարաւային կովկասում: Հայաստանի արտաքին քաղաքականութեան դիվերսիֆիկացիան եւ լիարժէք ինքնիշխանութիւնը Ռուսաստանի վերջն է առնուազն Հարաւային կովկասում:

Այդ «եռանկիւնին» պահելու համար Ռուսաստանը մշտապէս դիմել է ամենակոշտ քայլերի, որոնք ունեցել են կանխարգելիչ նշանակութիւն: Այդպէս էր 1999-ին, 2007-ին եւ 2008-ին, երբ նկատուած էին «դիվերսիֆիկացիայի» թոյլ ազդակներ:

Այնպէս որ, մնում է սպասել «ամերիկացի օդաչուներին»՝ գուցէ մի լուր բերեն, սիրուն կուռնկի պէս:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱՉԱՆԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

SYRIAN ARMENIAN RELIEF FUND
Save Support Sustain
www.syrianarmenianreliefund.org

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Չայկական ժամանակ». Ո՞ւմ համար են ցանկանում փոխել ԶՅ նախագահի թեկնածուներին առաջադրուող պայմանները

«ՀՀ նախագահի աշխատակազմից Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովին առաջարկներ են ներկայացրել, որոնք առաջիկա չեն հրապարակվում: Այս մասին գրում է «Հայկական ժամանակ» թերթը եւ յաւելում. «Մեր ունեցած տեղեկութիւններով, առաջարկներից մէկը վերաբերում է ՀՀ նախագահի թեկնածուներին առաջադրուող պայմաններին, մասնաւորապէս՝ վերջին 10 տարում ՀՀ-ում բնակուելու սահմանադրական դրոշմին: ՀՀ Սահմանադրութեան յօդուած 50-ի համաձայն, Հանրապետութեան նախագահ կարող է ընտրուել վերջին 10 տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին 10 տարում ՀՀ-ում մշտապէս բնակուող եւ ընտրական իրաւունք ունեցող իւրաքանչիւր ոք: Նախագահական նստավայրից առաջարկուում է իջեցնել այդ 10 տարուայ ցենզը: Սոյն տեղեկութիւնը մեր թղթակցի հետ գրոցում հաստատել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգէն Սարգսեանը: Սոյն առաջարկը Սահմանադրական բարեփոխումների յանձնաժողովին է ուղարկել անձամբ Վիգէն Սարգսեանը: Ի՞նչ նպատակով է արւում

սոյն փոփոխութիւնը եւ ո՞ւմ համար: Մօտ երկու շաբաթ առաջ՝ Սեպտեմբերի 27-ին, Սերժ Սարգսեանի հրամանագրով՝ ՀՀ նախկին վարչապետ Արմէն Սարգսեանը նշանակուեց Մեծ Բրիտանիայի եւ Հիւսիսային Իռլանդիայի Միացեալ Թագաւորութիւնում ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան: Արմէն Սարգսեանը, փաստօրէն, երրորդ անգամ նշանակուեց նոյն պաշտօնում: Ինչպէս յայտնի է, նա վաղուց Հայաստանում չի բնակուում: Միջազգային կոնվենցիաների համաձայն, սակայն, տուեալ երկրում այլ երկրի դեսպանատունը համարուում է համապատասխան երկրի տարածք: Այսինքն, Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպանատունը համարուում է ՀՀ տարածք եւ հետեւաբար, դեսպանն էլ՝ այդ տարածքի, այսինքն, ՀՀ բնակիչ: Արդեօ՞ք Արմէն Սարգսեանի համար է իջեցում 10 տարուայ շեմը: Իշխանութեան վերին օղակներում արդէն տեւական ժամանակ քննարկուում է Արմէն Սարգսեանին, նախ ՀՀ վարչապետ, այնուհետեւ ՀՀ նախագահի թեկնածու առաջադրելու տարբերակը», - գրում է «Հայկական ժամանակը»:

Արարատ Զուրաբեան. «Ընդդիմութեան մեծ մասը պրոռուսական ուժեր են»

Հոկտեմբերի 26-ին անցկացնելու ենք ՀՀԾ հիմնադիր համագումարը եւ կը փորձենք լրացնել այն բացը, որ կայ ընդդիմութեան դաշտում: Այս մասին մամուլի ասուլիսում նշեց վերակազմաւորուող ՀՀԾ նախաձեռնող խմբի անդամ Արարատ Զուրաբեանը՝ յաւելելով, որ նկատի ունի այն փաստը, որ Մաքսային Միութեան անդամագրուելու վերաբերեալ Սերժ Սարգսեանի յայտնի յայտարարութիւնից յետոյ ընդդիմադիր դաշտը համարժէք արձագանք չտուեց: «Այն, որ ընդդիմութիւնը չարձագանքեց՝ լուրջ հարուած է, համաձայն եմ, եւ հետեւանք է ընդդիմութեան գործունէութեան, որը փաստօրէն վերջին տարիներին իր ջանքերը կենտրոնացրել է ոչ այն ուղղութեամբ: Ընդդիմութեան մեծ մասը պրոռուսական ուժեր են, դրա համար էլ արձանագրուում են նման իրողութիւններ», - ասաց նա՝ յաւելելով, որ ներկայումս իրենք որոշ քաղաքական որոշ ուժերի հետ խորհրդակցութիւններ են անցկացնում նաեւ այդ խնդրի շուրջ: Նրա խօսքով՝ մինչեւ Սեպտեմբերի 3-ը Հայաստանը յստակ գնում էր դէպի Եւրոպա, բայց մէկ օրուայ մէջ ամէն ինչ փլուզուեց:


Երեւանում Մոսկուայի պետհամալսարանի մասնաճիւղ կը բացուի

Հայաստանում Միխայիլ Լոմոնոսովի անուան Մոսկուայի պետական համալսարանի մասնաճիւղ բացելու հնարաւորութեանն առնչուող մի շարք հարցեր են քննարկուել այսօր համալսարանի պրոռեկտոր Դավիթ Նիդրեւի գլխաւորած պատուիրակութեան հետ կրթութեան եւ գիտութեան նախարար Արմէն Աշոտեանի հանդիպման ժամանակ: Նախարարը նշել է, որ արդէն մի քանի տարի ընթացքում են մասնաճիւղի բացման շուրջ բանակցութիւնները, որի մասին բարձրաձայնել են նաեւ երկու երկրների նախագահները, հարցը ներառուած է միջկառավարական յանձնաժողովի օրակարգում: «Ե՛ւ հայկական, ե՛ւ ռուսական կողմն այս ընթացքում արել են հնարաւորը՝ նախագծի իրականացման եւ պայմանաւորութիւնները գործնական փուլ տեղափո-

Չուրաբեանը համոզմունք յայտնեց, որ Հայաստանի համար եւրաինտեգրումը կարուկ կարող էր փոխել երկրի վիճակը: «Մենք դուրս մնացինք եւրոպական ինտեգրացիայի պրոցէսից՝ ի տարբերութիւն Ռուսիայից, Մոլդովայի, Վրաստանի, ովքեր կը ստորագրեն կամ կը նախատորարկեն Ասոցացման համաձայնագիրը», - ասաց Զուրաբեանը: Անդրադառնալով Մաքսային Միութեանը, նա նշեց, որ այս պահին ոչ ոք չի կարող խօսել այդ միութեան առաւելութիւնների մասին, փոխարէնը կը լինեն կորուստներ: Վերակազմաւորուող ՀՀԾ նախաձեռնող խմբի անդամը համեմատելով Մաքսային միութեան անդամակցութիւնն ու ԵՄ-ի հետ ասոցացման համաձայնագրի ստորագրումը, նշեց, որ եթէ ընտրութիւն կայ՝ Տոմսկի պոլիտեխնիկական ինստիտուտի եւ Հարլարդի համալսարանի միջեւ, ապա գերադասելի է ձգտում ունենալ աւելի բարձ պայմանների: «Պէտք է լինի ձգտում փոխելու, փոփոխելու որոշ հարցեր: Բնական է, որ կը լինէին բարդութիւններ, որովհետեւ սա քաղաքակրթական համակարգերի ընտրութեան հարց է», - ասաց նա:

«Զուարթնոցի հին շէնքը չպետք է քանդուի»

Հայաստանի Հանրային Խորհուրդն քննարկում է դրել Քաղաքացիների խորհրդի «Զուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքը քանդելու մասին դիմումը: Դիմումատուի համար հիմք էր ծառայել այն, որ քաղաքացիական պետք է կառավարութեանը ներկայացնի իր 5 տարիների զարգացման պլանը եւ այդ համատեքստում ցանկանում էր պարզել, թէ հարցը հասարակութեան մէջ ինչ նշեղութիւն ունի:



Երեւանի «Զուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքը

Բացի այդ, ճարտարապետ Անահիտ Թարխանեանը՝ որպէս «Զուարթնոց» օդանաւակայանի հին մասնաշէնքի համահեղինակ Արթուր Թարխանեանի դուստր, պաշտօնական նամակ էր ներկայացրել Հանրային Խորհուրդ՝ շէնքը քանդելու երկրորդ փորձը կանխելու նպատակով՝ պնդելով, որ շէնքը վարձակալութեան յանձնուած «կորպորացիոն Ամերիկան» խախտել է պայմանագիրը, որը կնքուել էր 2001-ին, ուստի դրա իրական սեփականատէր՝ ՀՀ կառավարութիւնը պետք է կազմակերպութեան ձեռքից վերցնի այն եւ տայ այնպիսի ընկերութեան, որն ընդունակ է շահագործելու՝ պահպանելով այն: Հանրային Խորհրդի անդամ, Նկարիչների Միութեան նախագահ Կարէն Աղամեանը վրդովուած է: Ըստ նրա Հայաստանում կամաց-կամաց սկսում են վերացնել շատ արժէքաւոր մշակութային արժէքներ: «Այսօր կորցրել ենք 20-րդ

դարի լաւագոյն շէնքերը: Ծատ զարմանալի բան է կատարուում», - նշեց նա եւ լիջեցրեց, որ այսօր չունենք «Սեւան» հիւրանոց, Երիտասարդական պալատ, Լեզուի ինստիտուտ եւ այլն: Արուեստաբան Սիւզի Փիլոսեանը նշեց, թէ վերջին տարիներին ինչ-որ մի ձեռք մշակութային արժէքները քանդում է: «Այդ ձեռքը կտրել է պէտք: Մեր հետքը վերացնում ենք մեր ձեռքով: Եթէ թուրքերը անում են մենք բողոքում են, կամ վրաստանում են քանդում, աղմուկ ենք բարձրացնում», - նշեց նա:

Հանրային Խորհուրդը քուէարկութեամբ միաձայն որոշում կայացրեց. դիմել Մշակույթի նախարարութեան մշակութային արժէքների պահպանութեան վարչութեան փորձագիտական յանձնաժողով՝ «Զուարթնոցի» հին շէնքը յուշարձանների պետական ցուցակում վերականգնելու համար: Ի դէպ, Անահիտ Թարխանեանը նշեց, որ շէնքը միայն որպէս երկաթբետոն ամենահամեստ գնահատմամբ 100 մլն դոլար արժէ:

Պէ՛տք են մեզ «Երեւունի-Երեւանի» ճոխութիւնները

Տօնը լաւ բան է, եթէ այն բոլորի համար է: «Ժառանգութեան» պատգամաւոր Թեւան Պօղոսեանը գտնում է, որ էրեւունի-երեւանը պէտք է բոլորիս տօնը լինի. «Խնդիրը հետեւեալում է՝ ինչպէս նշել, որ բոլորը ներգրաւուն են, բոլորն ուրախանան, եւ միգուցե օպտիմալ ձեւով գումարներ ծախսուեն»: Վերջին օրերին մեծ աղմուկ բարձրացրեց ՀՀ Անկախութեան 22-ամեակին Նունէ Եսանեանի մենահամերգը, որի համար պետբիւջէից ծախսուեց 150 հազար դոլար կամ 54 մլն դրամ: Իսկ Հոկտեմբերի 11-ին եւ 12-ին «Իմ սրտի ուղեկից» խորագրի ներքոյ «էրեւունի-Երեւան 2795» տօնակատարութեան համար նախատեսուած է ծախսել մօտ 200 մլն դրամ: Արդեօք նման ծախսերն իմաստ ունեն մի երկրում, որտեղ աղքատութեան շեմն այսօր բարձր է: «Այսօր շատ յաճախ մենք մեզ շատ ճոխութիւններ ենք թոյլ տալիս, եւ դրա հետ միասին չենք կարողանում հասնել այն նպատակին, որ այդ ճոխութեան հիման վրայ նաեւ աշխարհն էլ իմանայ, որ մենք հին ազգ ենք», - ասում է Թեւան Պօղոսեանը: ԲԶԿ պատգամաւոր, տնտեսագէտ Միքայիլ Մելքոնեանը կողմնակից է բոլոր տիպի ծախսերի



թափանցիկութեան եւ հանրային քննարկումների. «Եթէ տուեալ ծախսը, ես չեմ ուզում կոնկրետացնել, ապացուցում է, որ այդ ծախսից բխող արդիւնքը պոզիտիւ է ֆեկտ կը բերի հանրութեանը, ես կողմնակից եմ: Բայց եթէ պարզուի, որ այդ ծախսը որեւէ արդիւնք չի տալիս, այսպէս ինչ-որ մի գալուցկայի համար մի ծախս է, որը հերթական անգամ պարտաւոր ենք՝ անում ենք, ես դէմ եմ նման ծախսի»: Միքայիլ Մելքոնեանը լիջեցնում է՝ 2 տարի առաջ աղքատների թիւը երկրում 1 մլն-ից աւել էր, այսօր այդ թիւը մեծացել է. «Ես կողմ եմ, որ ինչ-որ մի տեղ մենք գօտիները սեղմենք»: Պետբիւջէից նման հսկայական գումարների յատկացումը շուտ ծրագրերի կազմակերպման համար որքանո՞վ է արդարացուած: Հարցի պատասխանը չունի նաեւ Ֆինանսների փոխնախարար Սուրէն Կարայեանը. «Ես չեմ գրաւում, էլի, իմը եկամտային հարց է»:

խելու համար: Մենք շահագործուած ենք Հայաստանում բուհի մասնաճիւղի հիմնմամբ: Խնդրին անհրաժէշտ է ցուցաբերել քաղաքական եւ կրթական մօտեցում», - ասել Աշոտեանը:

ԼՈՒՐԵՐ

«Հայաստանի համար դժուար կը լինի առանց ռուսաց լեզուի»

Ռուսները նպատակաշարժար չեն համարում ռուսաց լեզուն Հայաստանում դարձնել երկրորդ պետական լեզու:

ՀՀ-ում ՌԴ դեսպանի խորհրդական Վիկտոր Կրիվապուկովն այս առիթով ասում է. «Մոտեցնել երկրում էթնոկապիտալ ճիշդ չէ ռուսաց լեզուն դարձնել երկրորդ հիմնական լեզու»:

Չնայած դրան, ըստ պարոն Կրիվապուկովի, Հայաստանի համար դժուար կը լինի առանց ռուսաց լեզուի: 2009, 2010 թուականներին ռուսաց լեզուն Հայաստանի տնտեսության լեզուն է. «Դե, ինչպէ՞ս կարելի է աշխատել երկաթգծում՝ չիմանալով ռուսաց լեզուն, եթէ Հարավկովկասեան երկաթուղիները ռուսականի դուստր ձեռնարկով լինեն են, որտեղ կանոնադրութիւնը եւ նորմատիւ դրոյթները ռուսերէն են»:

Դեսպանի խորհրդականը չի շեղուց, որ «Նախընտրում» վերջերս տեղի ունեցած վթարը, որը հանգեցրեց զոհի, նոյնպէս ռուսերէնի չիմացութեան արդիւնք էր: Սուրէնաւանում արտադրական բիտումի գործարանում տեղի ունեցած հրդեհը եւս ռուսաց լեզուի չիմացութեան արդիւնք էր. «Երբ փորձեցին պարզել հրդեհի պատճառները, պարզուեց, որ գործարանի 10 օպերատորներին միայն մէկը շատ թէ քիչ գիտէր ռուսերէն եւ սեղմել էր ոչ այն կոճակը: Իսկ եթէ սեղմէր մէկ այլ կոճակ, Արարատի մարզի կէսը կ'ոչնչանար»:

Կրիվապուկովը շարունակում է՝ Հայաստանում սպան չի կարող

չիմանալ ռուսերէն, նա ռուսական գինտեխնիկա է օգտագործում. «Սա վա՞տ է, թէ՞ լաւ: Այո, ռուսերէնը ձեզ համար պէտք է լինի ոչ միայն առաջնային, այլեւ պարտադիր լեզու»:

Դեսպանի խորհրդականը չի շեղուց, որ ամէն օր Հայաստանցիները կապ են պահպանում Ռուսաստանում ապրող իրենց հարազատների հետ, իսկ դա տնտեսական առումով Հայաստան-Ռուսաստան բարեկամութեան օգտին է. «Անցեալ տարի անձնական հաշիւներով մէկ միլիարդ 400 միլիոն դոլար, իսկ մնացած՝ աւելի հարուստ աշխարհից՝ 400 միլիոն դոլար: Ես չեմ հաւատում, որ մնացած աշխարհում ապրող ձեր հարազատներն աւելի ժլատ են, բայց թիւերն այդպիսին են»:

Դեսպանի խորհրդականը չի շեղուց նաեւ «Հայրենակիցներ» ծրագրի առաւելութիւնների մասին՝ այստեղից «Հայաստանի համար դժուար կը լինի առանց ռուսաց լեզուի»:

Դեսպանի խորհրդականը չի շեղուց նաեւ «Հայրենակիցներ» ծրագրի առաւելութիւնների մասին՝ այստեղից հեռացողները հեռանում էին իրենց հարազատների մօտ. «Դե միայն ձեր Մարտունու շրջանով կարելի է դատել: Որտե՞ղ են աշխատում մարտունեցիները՝ Արեւմտեան Միբիրում, Ուրալում, նրանք լաւ են աշխատում եւ ապահովում են իրենց ընտանիքների հոգսերը: Գնացէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչ շէնքեր են նրանք սարքում Մարտունիում»:

Թուրքիայում մօր հայ լինելը յայտնած լրագրողը ենթարկուել է հարազատների սպառնալիքներին

Թուրքիայի ժամանակակից լրագրողների միութեան նախագահ Ահմեդ Աբաքալը յայտնել է, թէ նոյնիսկ իր հարազատներից է սպառնալիքներ ստացել, երբ մամուլով ասել է, որ իր մայրն իր ամբողջ կեանքում թաքցրել է հայ լինելը եւ դրա մասին ինքը գիրք է գրել:

Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ գրող-լրագրող Ահմեդ Աբաքալն իր մօր մասին գրած «Հոշանայի վերջին խօսքը» գրքի շնորհանդէսի ժամանակ պատմել է, որ երբ ինքը մամուլով յայտնեց, որ գիրք է գրել 82 տարեկանում իր հայ լինելը բացայայտած մօր մասին, ենթարկուել է նոյնիսկ իր հարազատների սպառնալիքներին: «Երբ այսօր իմ բարեկամներն ինձ նման բաներ են ասում, ուրեմն բնական է, որ մայրս այդքան տարիներ վախեցել է յայտնել իր հայ լինելը», - նշել է Աբաքալը՝ շեշտելով, թէ իր մայրը ինդերել էր, որ մինչ իր մահը ոչ-ոքի չասի իր հայ լինելու մասին:

Առաքելեան կը մնայ անազատութեան մէջ

Շարունակուած էջ 1-էն

Լոր Եվա Դարբինեան յայտարարեց, որ փաստաբանը այդ միջնորդութիւնը կրնայ կատարել միայն պաշտպանական ճառի ժամանակ:

Տիգրան Առաքելեան վրդովուած բացականչեց, որ դատարանը, փաստօրէն, չի յարգեր նոյնիսկ իր վերադասի կայացուցած որո-

շումը՝ համաներման մասին ու ըստ որ, եթէ այդպէս է՝ իրեն այդ համաներումը պէտք չէ:

Դասլիճին մէջ գտնուող ներկաները սկսան սուլել եւ բացականչել՝ «ամո՛թ», այդ պահուն դատաւորը հեռացաւ դասլիճէն առանց որեւէ բան ըսելու, որմէ յետոյ Առաքելեանի թեւերը բռնած ու ժով տարին դասլիճէն:

Նալբանդեան .- «Հայաստանը ցանկանում է առաջ տանել գործակցութիւնը ԵՄ-ի հետ»

Բրիւսելում աւարտուեց Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանի եւ Եւրոպական միութեան արտաքին քաղաքականութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի հանդիպումը:

Բարոնուհի Էշթոնի մամուլի ծառայութիւնը, մասնաւորապէս, հաղորդում է, որ հանդիպումը եղել է երկկողմ կանոնաւոր հանդիպումների մաս: Հանդիման ընթացքում քննարկուել են Եւրամիութեան եւ Հայաստանի երկկողմ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Նոյեմբերի վերջին կայանալիք Արեւելեան գործընկերութեան գազաթնափողով պատրաստութիւնները:

Եւրամիութեան բարձր ներկայացուցիչը շեշտել է, որ ԵՄ-ն

հաւատարիմ է մնում Հայաստանի հետ յարաբերութիւնների խորացմանը բոլոր այն ոլորտներում, որոնք համատեղելի են Հայաստանի կողմից վերջերս յայտարարուած Մաքային Միութեան անդամակցութեան հետ, ասուած է Էշթոնի գրասենեակի հաղորդագրութիւնում:

Իր հերթին, Հայաստանի արտաքին գործերի նախարարութեան տարածած հաղորդագրութիւնում ասուում է, որ Էդուարդ Նալբանդեանը ընդգծել է, թէ Հայաստանը ցանկանում է հնարաւոր բոլոր ուղղութիւններով առաջ տանել համագործակցութիւնը Եւրոպական միութեան հետ՝ հիմնուելով այն համատեղ ձեռքբերումների եւ առաջընթացի վրայ, որոնք վերջին տարիներին գրանցուել են Հայաստան - Եւրամիութիւն յարաբերութիւններում:

«168 ժամ»։ Գերմանացի գործարարի տխուր փորձը տեսնելով՝ Գերմանացիները հրաժարուել են ՀՀ-ում միլիոնաւոր գումարներ ներդնելուց

«Ես իսկապէս սիրում եմ Հայաստանը: Անկեղծ եւ սրտաբաց ես պէտք է խոստովանեմ, որ դա հզօր երկիր է՝ բարեկամական ու աշխատասէր մարդկանցով, լաւ կրթական համակարգով, եւ այլն: Հայաստանը շատ բան ունի առաջարկելու, եւ հասարակ հայ ժողովրդի հետ աշխատելը մշտապէս հաճելի է եղել ինձ համար: Դա պարզ է, որ ես չէի ներդնի եւ չէի մնայ այդտեղ՝ որպէս ներդրող, եթէ ես չտեսնէի մեծ, իսկապէս մեծ ներուժ այս երկրում, որն ունի հմուտ, կրթուած սերունդ: Հայաստանն իսկապէս ունի հսկայական ներուժ, եւ դա չի կարող անտեսուել», - «168 ժամ» թերթի թղթակցի հետ զրոյցում ասել է ԲՀԿ նախագահ Գաբրիլ Ծառուկեանին պատկանող «Երեւանի «Արարատ» կոնեակի-գինու-օղու կոմբինատ» ՓԲԸ-ի ղեկավարը: Գաբրիլը շեշտեց, որ «Երեւանի «Արարատ» կոնեակի-գինու-օղու կոմբինատ» ՓԲԸ-ի ղեկավարը հայց ներկայացրած «Խոսին-վեստ» ընկերութեան ղեկավար Ստեֆան Լաքսուբերը:

Միաժամանակ նա ասել է, որ օրէցօր աւելի շատ թիւով օտարերկրեայ ներդրողներ են դիմում իրեն, քանի որ լսել են կատարուածի եւ դատական գործընթացի մասին: Գերմանացի գործարարն ասել է, որ որոշ ներդրողներ ցանկացել են ՀՀ-ում ներդնել միլիոնաւոր գումարներ, բայց հրաժարուել են իրենց մտադրութիւնից, քանի որ աչքի առջեւ նման տխուր փորձ է եղել:

Նշենք, որ ՀՀ վճարակաւ դատարանը վարոյթ է ընդունել ընկերութեան հայցը, որով բողոքարկուում է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած վճիռը «Երեւանի «Արարատ» կոնեակի-գինու-օղու կոմբինատ» ՓԲԸ-ի հանդէպ Լաքսուբերի ներկայացրած պահանջները մերժելու վերաբերեալ: «Ես տեղեակ եմ, թէ ինչպէս է հայկական բիզնեսը փոխկապակցուած երկրի քաղաքական իշխանութեան հետ», - ասել է գերմանացի գործարարը:

Իշխանութիւնները մտադիր են

Շարունակուած էջ 1-էն

Փոստանջեանի համաձայն, ինքը յանձնաժողովէն պարզաբանումներ ստացած է, որ Աբրահամեան իրաւասու չէ փոփոխութիւններ կատարելու հայկական պատուիրակութեան կազմէն ներս, որովհետեւ պատուիրակութեան կազմը արդէն հաստատուած է, եւ եթէ Աբրահամեան փորձէ խոչընդոտել իր գործունէութիւնը, ապա արձագանքը կը լսուի Եւրոպայի խորհուրդէն:

Ընդդիմադիր պատգամաւորի համոզմամբ՝ Աբրահամեան հետագային եւս չի կրնար իրեն հեռացնել հայկական պատուիրակութեան կազմէն, քանի որ ԵՄԽՎ-ի ներս պէտք է ներկայացուած ըլլան Հայաստանի խորհրդարանի բոլոր իմբակցութիւնները:

Փոստանջեանի համաձայն, իրեն հայկական պատուիրակութեան կազմէն հանելու՝ Յովիկ Աբրահամեանի քայլերու մասին արդէն տեղեակ են եւ ԵՄԽՎ-ն եւ Եւրոպայի ժողովրդական կուսակցութիւնը, որու կ'անդամակցի Փոստանջեան:

ԵՄԽՎ-ի մօտ հայկական պատուիրակութեան մէկ այլ անդամ, ԲՀԿ պատգամաւոր Նախրա Զոհրաբեանի համաձայն, քաղինոյի մէջ խաղալու եւ մեծ գումարներ կորսնցնելու մասին Փոստանջեանի հարցը ցնցած է ԵՄԽՎ պատգամաւորներուն:

«Չեմ լսել ոեւէ մէկ պատգամաւորից, ով ասէր, թէ «էս ինչ հրաշալի հարց հնչեց»: Բոլորի համար ուղղակի անընդունելի էր, անգամ այն պատգամաւորների համար, ովքեր յայտնի են իրենց մոլի հակահայութեամբ եւ ովքեր մշտապէս ուրախացել են, երբ Հայաստանի հետ կապուած որեւէ տհաճ միջոցառում տեղի ունեցել: Անգամ նրանց համար այս որակի յայտարարութիւնը բացարձակապէս անընդունելի էր», - ասաց Զոհրաբեան:

Այս կապակցութեամբ, Հայաստանի քաղաքական շրջանակներու եւ հանրային կարծիքի մօտ կը հնչեն տարբեր տեսակետներ: Ոմանք Փոստանջեանի հարցադրումները կը գտնեն վիրաւորական ամբողջ Հայաստանի դէմ, իսկ ուրիշներ կը պաշտպանեն Փոստանջեանին:

«ԲԱՐԲԱՐՈՍՆԵՐ, ԻՆՉՈ՞Ւ ԷՔ ԼՈՒՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ». ԹՈՒՐՔԵՐԻՆ ՀԱՐՑՐԵԼ Է ԿՈՒՍՏՈՒՐԻՑԱՆ ՈՒ ՀԵՌԱՑԵԼ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ



Հոկտեմբերի 9-ին Անթալիայի «Ոսկե նարինջ» միջազգային կինոփառատօնին մասնակցելու նպատակով Թուրքիայի Անթալիա քաղաք էր ժամանել աշխարհահռչակ սերբե ռեժիսոր Էմիր Կուստուրիցան:

Թուրքական լրատվամիջոցների փոխանցմամբ՝ մինչև իր ժամանումը եւ դրանից յետոյ ռեժիսորի հասցեին Թուրքիայում քաղաքական գործիչների եւ արուեստագետների շրջանում հնչող կոշտ քննադատություններից յետոյ Կուստուրիցան երէկ որոշ յայտարարություններ անելուց յետոյ հեռացել է Թուրքիայից:

Անդրադառնալով Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջութեան նախարար Էրթուղրուլ Գիւնայի յայտարարություններին եւ Թուրքիայում իր դէմ սկսուած արշաւը որակելով որպէս «բարբարոսություն»՝ աշխարհահռչակ ռեժիսորը յայտարարել է.

«Ես որեւէ քաղաքական կուսակցութեան անդամ չեմ: Այս փառատօնի ժամանակ բախուեցի մի բանի, որն ինձ հետ երբեք չէր պատահել: Այս կապակցութեամբ ինձ պաշտպանել անգամ չեմ ցանկանում, սակայն որոշ բաներ պարզաբանման կարիք ունեն: Անթալիայի քաղաքապետին ջերմ ընդունելութեան համար ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել: Սակայն, միեւնոյն ժամանակ, ցանկանում եմ յայտարարել, որ Թուրքիայի մշակույթի նախարարին ընկալում եմ որպէս թշնամի: Երբ մի երկրի մշակույթի նախարար նման յայտարարություններ է անում, այդ երկրի փողոցները մէկտեղ որեւէ քաղաքացի ինձ կարող է ուղղակի գնդակահարել»,- յայտարարել է Կուստուրիցան՝ քննադատելով նաեւ Թուրք ռեժիսոր Սեմիր Քափլանօղլուն, ով նոյնպէս իր «Մեղր» ֆիլմով հրաժարուել էր մասնակցել կինոփառատօնին:

Հաստատուեցաւ Այցագրի Համաձայնագիրը

Շարունակուած էջ 1-էն

եան գօտիի քաղաքացիներու համար մուտքի այցագրի ռեժիմը վերացնելու մասին:

Չեկուցող էղիտ Պաուլը յայտարարած է, որ վիզային ռեժիմի պարզեցումը կրնայ նոր ազդակ հաղորդել համագործակցութեան, յատկապէս քաղաքացիներու տեղաշարժերու առումով, ինչ որ շատ

«Եթէ ցեղասպանութիւնների նկատմամբ այդպէս զգացմունքային էք, ինչո՞ւ էք խօսում Առաջին աշխարհամարտի տարիներին հայերի դէմ իրականացուած ցեղասպանութեան մասին: Ես միշտ դէմ եմ հանդէս եկել Պոստիւլամ մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններին: Եւ եթէ հազար տարի էլ ապրեմ, հազար տարի էլ դէմ եմ լինելու ցեղասպանութիւններին»,- յայտարարել է Էմիր Կուստուրիցան:

Յիշեցնենք, որ Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջութեան նախարար Էրթուղրուլ Գիւնայը, ինչպէս նաեւ Սեմիր Քափլանօղլուն յայտարարել էին, որ չեն մասնակցելու «Ոսկե նարինջ» կինոփառատօնին, որովհետեւ այնտեղ է կուստուրիցան:

«Մենք բոլորս կարեւորում ենք Անթալիայի կինոփառատօնը: Ես՝ որպէս նախարար, միշտ աջակցել եմ այդ միջոցառմանը: Մէկ այլ առիթով Անթալիա կը գնամ, սակայն կինոփառատօնին չեմ մասնակցի, որովհետեւ այնտեղ է Էմիր Կուստուրիցան: Վերջինս Պալքաններում պատերազմի ժամանակ ոչ միայն դուրս է եկել սեփական ժողովրդի զգացմունքների դէմ, այլեւ ընդհանուր մարդկային արժէքների հարցում որդեգրել է բացասական, անհասկանալի, հակակրեւի գործելաոճ: Իսկ դա բոլորիս է վշտացրել: Ես պատերազմի ընթացքում այցելել եմ Պոստիւլամ կարող անտեսել հանրութեան ձայնը եւ այդ պատճառով փառատօնին չեմ մասնակցելու»,- յայտարարել էր Թուրք նախարարը:

Իսկ աւելի վաղ Թուրքիայի «Արդարութիւն եւ զարգացում» իշխող եւ «Ազգայնական շարժում» ընդդիմադիր կուսակցութիւնների ներկայացուցիչները պահանջել էին կուստուրիցային հանել «Ոսկե նարինջ» կինոփառատօնի ժիւրիի կազմից:

կարեւոր է մարդկանց միջեւ շփումներու տեսանկիւնէն:

Միւս կողմէ, Պրիւքսելի մէջ աւարտեցաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Էդուարդ Նալբանդեանի եւ Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթընի հանդիպումը:

Պարոնուհի էշթընի մամուլի ծառայութիւնը, մասնաւորապէս,

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԼԻՊԻՈՅ ՄԷՋ ԱՄՆ-Ի ՈՒԺԵՐԸ ՁԵՐԲԱԿԱԼԵՑԻՆ ԱԼ ՔԱՅԻՏԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՊՈՒ ԱՆԱՍԸ

Քանի մը օր առաջ ԱՄՆ-ի գինեալ ուժերը երկու կարեւոր թիրախներու վրայ յարձակում գործեցին Ափրիկէի մէջ: Առաջինը Լիպիոյ մայրաքաղաք Թրիփոլիի մէջ էր: Անոնք անակնկալօրէն ձերբակալեցին Ալ Քալիտա կազմակերպութեան պատասխանատու ղեկավարներէն Ապու Անաս Ալ Լիպի: Ան կարեւոր դերակատարութիւն ունեցած է 1998ի Ափրիկէի մէջ, ամերիկեան զոյգ դեսպանատուներու վրայ կատարուած մահացու յարձակումներու ընթացքին:

Երկրորդ յարձակում մըն ալ գործուեցաւ Սոմալիի Հարաւային շրջանի Ալ Շապապ ահաբեկչական կազմակերպութեան ղեկավար Իգրիմալի նստավայրին դէմ: Այս վերջինը իր ընկերներով յարձակած էին Նայրոպիի ԱՄՆ-ի դեսպանատան վրայ, պատճառ դառնալով 213 հոգիներու մահուան եւ վիրաւորելով 4,500 հոգի:

ՍԵՆՏՏՅԻ ԻՇԽԱՆ ՄԸ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴԱԲԱԴՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍ

Տուպայ. (Արաբական էմիրութիւններ) Արաբական Ծոցի երկիրներու Բարգաւաճման Ծրագրի նախագահ սեուտցի իշխան Թալալ Պին Ապտէլ Ազիզ յայտարարութիւն մը կատարելով ըսաւ թէ դաւադրութիւն մը կը տեսնէ ԱՄՆ-ի կողմէ արաբական երկիրներու դէմ: Իր կայքին վրայ կատարած այս մեկնաբանութեան մէջ սեուտցի իշխանն ըսաւ. թէ՛ այս դաւադրութեան մէջ ներառուած են Եգիպտոսն ու Պահարէսը: Իր այս վերաբերմանը կ'երթան Պուշի նախագահութեան շրջանի արտաքին գործոց նախարար Գոնտաուլիզա Ռաջաի կատարած զգայացունց յայտարարութիւններուն:

ՍՈՒՐԻՈՅ ՔԻՄԻԱԿԱՆ ԶԵՆՔԵՐՆ ՍԿԱՍՆ ԱՆԴԱՄԱՅԱՏՈՒԻԼ

ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի որոշումով Սուրիա ժամանած քիմիական զէնքերու ապագինման միջազգային յանձնախումբն սկսաւ իր աշխատանքներուն: Այդ մասնագէտները՝ անցնող քանի մը օրուան ընթացքին արդէն անդամահատած, փճացուցած կամ կազմալուծած են հրթիռային գլուխներ եւ օդէն արձակուելիք ուղմբեր: Միջազգային յանձնախումբի պարտականութիւնն է այցելել երկրի բոլոր այն շրջանները ուր ամբարուած են քիմիական զէնքերը եւ կազմալուծել ու անդամահատել զանոնք:

Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ էլ Մուալլէմի յայտարարութեան համաձայն երկրէն ներս կը գործեն 83 երկիրներու ահաբեկչական խումբեր:

Միւս կողմէ պայթիւնները շարունակուեցան Սուրիոյ մէջ, յատկապէս մայրաքաղաք Դամասկոսի մէջ: Ըստ գերմանական «Տէր Շփիկըլ» թերթին Սուրիա-իրան փոխադրել տուած է իր պատերազմական օդանավերուն մեծ կարեւոր մասը:

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՐ ՀԱՅԱՍՏԱՆ ՀՐԱԻՐՈՒԱԾ

Ժընեւի մէջ վերջերս տեղի ունեցաւ Խորհրդարանական Միջազգային 29րդ համաժողովը: Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան հանդիպում մը ունեցած է Լիբանանի Խորհրդարանի նախագահ Նէպիհ Պըրիի հետ: Այս վերջինը մտահոգութեամբ խօսած է Սուրիոյ իրավիճակի մասին: Իսկ Լիբանանի կացութեան մասին արտայայտուելով նշած է, որ Լիբանան կը շարունակէ պահպանել երկրի խաղաղութիւնն ու անվտանգութիւնը: Սոյն հանդիպման աւարտին Յովիկ Աբրահամեան Հայաստան այցելելու հրաւէր տուած է Նապիհ Պըրիին:

ԽԼՐՏՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՏԱՐԱԾՔԻՆ

Եգիպտոսի նախկին նախագահ Մուհամմատ Մուբարի, Յունիս Յի պաշտօնակալութենէն ասդին խիստ խոռվայոյց վիճակ կը տիրէ բովանդակ երկրի տարածքին: Անցեալ Երեքշաբթի Մահմետական Եղբայրներ կազմակերպութիւնը, ապօրէն հռչակուելէն ի վեր իր մեծագոյն գործունէութիւնն եղաւ համատարած ցոյցերու կալցումը, որոնք վերջ պիտի գտնէին Գահրիէի Ալ Թահրիր հրապարակին վրայ եւ այդ՝ մահուան գինով: Արդարեւ այդ ցոյցերու ընթացքին, իրարու հակամարտ ոյժերը բուռն բախումներ ունեցան տարբեր քաղաքներու մէջ, որոնց իբր արդիւնք 51 անձեր զոհուեցան:

հաղորդեց, որ հանդիպումը եղած է երկկողմ կանոնաւոր հանդիպումներու մէկ մաս: Հանդիպման ընթացքին քննարկուած են Եւրամիութեան եւ Հայաստանի երկկողմ յարաբերութիւնները, ինչպէս նաեւ Նոյեմբերի վերջերուն կայանալիք Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովի պատրաստութիւնները:

Եւրամիութեան բարձր ներկայացուցիչը շեշտած է, որ ԵՄ-ն հաւատարիմ է կը մնայ Հայաստանի հետ յարաբերութիւններու խորացման՝ բոլոր այն ոլորտներուն մէջ, որոնք համատեղելի են Հայաստանի կողմէ վերջերս յայտարարուած Մաքսային Միութեան անդամակցութեան հետ, ըսուած է էշթընի գրասենեակի հաղորդագրութեան մէջ:

Իր հերթին, Հայաստանի արտաքին գործերու նախարարութեան տարածած հաղորդագրութիւնը կը յայտնէ, որ էդուարդ Նալբանդեան ընդգծած է, թէ Հայաստան կը փափաքի հնարաւոր բոլոր ուղղութիւններով առաջ տանիլ համագործակցութիւնը Եւրոպական միութեան հետ՝ հիմնուելով այն համատեղ ձեռքբերումներու եւ յառաջընթացի վրայ, որոնք վերջին տարիներուն արձանագրուած են Հայաստան - Եւրամիութիւն յարաբերութիւններուն մէջ:

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ, ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ԵՒ ԹՐՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆոռնիա Քուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր

Խորհրդածույթի ժամանակ վերջին ուշագրավ լուրերի վերաբերեալ.

- Անցեալ շաբաթ CNN հեռուստաալիքի եթերում ամերիկահայ յայտնի փաստաբան Մարկ Կիրակոսը կշտամբեց Միացեալ Նահանգներին՝ Հայոց ցեղասպանութեան հարցում նրա երկակի ստանդարտների համար: Երբ հաղորդավարներ Քրիստիան Ամանպուրը եւ Անդերսոն Քուպերը քննադատում էին Իրանի կողմից հրէական Հոլոքոստի ժխտումը, Կիրակոսը նրանց յիշեցրեց նախագահ Օպամայի դրժած խոստման մասին՝ ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը: «Այդ տարածաշրջանում մեր ամենամեծ դաշնակիցը Թուրքիան է: Մինչեւ այժմ Թուրքիան ժխտում է Հայոց ցեղասպանութիւնը: Օպաման որպէս թեկնածու խօսում էր դրա մասին. «Եթէ ես ստանձնեմ նախագահի պաշտօնը՝ ես կը ճանաչեմ Հայոց ցեղասպանութիւնը»: Նախագահ դառնալուց չեսոյ նա ամբողջովին անտեսեց դա: Այնպէս որ, առկայ է դիմադրի քաղաքական խաղ, որը մի քիչ կեղծաւոր է», հաւաստեց Կիրակոսը:

- Սեպտեմբերի 22-ին Գերմանիայում կայացած ընտրութիւններում զերմանական Բունդեստագում՝ երկրի խորհրդարանի ստորին պալատում ընտրուել են թրքական ծագում ունեցող տասնմէկ օրէնսդիրներ՝ աւելի քան կրկնապատկելով նախորդ օրէնսդիր մարմնում ունեցած իրենց թուաքանակը: Հայերը չպէտք է կուրօրէն քննադատեն այս տասնմէկ պատգամաւորներին, քանի որ նրանցից ոմանք՝ լինեն թուրք կամ քուրդ, հնարաւոր է համակիր լինեն Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը:

- Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը (ՄԻԵԴ) Թուրքիային տուգանել է աւելի քան 200 հազար տոլարով՝ մի թուրք ընտանիքի տուճան առանց փոխհատուցման օտարելու համար: Դատարանը վճռել է, որ Թուրքիան խախտել է ընտանիքի սեփականութեան իրաւունքը: Այս ընտանիքը սպառել էր թրքական դատարաններում իր բոլոր բողոքարկումները՝ մինչ ՄԻԵԴ դիմելը: Մի ընթացիկում հետեւեալ հեղանական դիտողութիւնն է տեղադրել Turkish Daily News-ի կայքէջում. «Թուրքիայի թէ քրիստոնեայ Եւրոպայի դատարանն աւելի յարգանքով է վերաբերում մահմետական թուրք ժողովուրդին, քան մահմետական դատարանները Թուրքիայում»:

- Եւրամիութեան հետ կապերի գծով Թուրքիայի նախարար էզեմէն Բադիչն անցեալ շաբաթ յայտարարեց, որ «Թուրքիան, հաւանաբար, երբեք չի դառնայ Եւրոպական Միութեան անդամ՝ այդ դաշինքի ներկայիս անդամների կոշտ դիմադրութեան եւ կանխակալ վերաբերմունքի պատճառով»: Ինչպէս միշտ, Բադիչը սխալուում է: Թուրքիային չի յաջողուի դառնալ Եւրամիութեան անդամ, ոչ թէ արեւմտեան նախապաշարումների, այլ՝ իր երկրի օրէնքները եւրոպական ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելուց հրաժարուելու համար:

- Միրիայում «Ալ-Քաիդայի» ահաբեկիչների կողմից հազարաւոր քրիստոնեաներ, այդ թւում հայեր, առեւանգուել, սպանուել կամ խեղդուել

են, սակայն մինչեւ օրս եւրոպական կամ ամերիկեան որեւէ պաշտօնեայի կողմից դատապարտման ոչ մի խօսք չի հնչել: Դեռ աւելին, արեւմտեան ղեկավարները մահաբեր զէնք են մատակարարում ծայրայեղականներին, որպէսզի նրանք կարողանան էլ աւելի շատ անմեղ մարդկանց կեանք խլել: Վաղուց ժամանակն է, որ արեւմտեան աշխարհի հանրութիւնն իր գայրոյթն արտայայտի զանգուածային բողոքի ցոյցերով եւ սուր հանդիմանութիւններով: Միացեալ Նահանգների Կոնգրեսը պէտք է արգելի զէնքի մատակարարումը Միրիայում կուռոյ ընտր օտարերկրեայ զինեալներին: Անցեալ շաբաթ Միրիայի Ռաքքա քաղաքում հայկական կաթոլիկ եւ յունական ուղղափառ եկեղեցիները պղծուել եւ կողոպտուել էին: Ձիհարականներն անամօթաբար մագլցել էին հայկական եկեղեցու զմբէթի վրայ եւ խաչի փոխարէն տեղադրել իրենց սեւ դրօշը:

- Ատրպէյճանի բռնակալ Իլհամ Ալիեւն անընդհատ եւ ակամայաջակցում է Հայ դատին՝ ատելի

յայտարարութիւններ անելով, որը բացասական տպաւորութիւն է ստեղծում միջազգային հանրութեան մօտ նրա երկրի մասին: Ալիեւի վիրաւորական յայտարարութիւնը, թէ «Երեւանը եւ Ջանգեզուրն ատրպէյճանական տարածքներ են» եւ «Կը գայ ժամանակը ու մենք այնտեղ կ'ապրենք», մտային խանգարում ունեցող մարդու զառանցանք է: Սպասուում է, որ Հոկտեմբերի 9-ին Ալիեւը երրորդ անգամ նախագահ կ'ընտրուի, իսկ դա նշանակում է, որ հայ ժողովուրդը կը շարունակի օգուտ քաղել նրա «օգտակար» յայտարարութիւններից եւս մի քանի տարի:

- Անցեալ շաբաթ ՄԱԿ-ի Գլխաւոր ասամբլեայում բանավէճը սրուեց, երբ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործերի նախարարները հանդէս եկան միմեանց հակասող յայտարարութիւններով: Ստորեւ ներկայացուած են արտգործնախարար էդուարդ Նալբանդեանի ելոյթից հատուածներ, որոնցում նա մեղադրում է Ատրպէյճանի հետեւեալ գործողութիւնները.

ա/ «Ուղղափառ եւ հակահայ ատելութիւն սերմանող հեռուստաբանութեան օրէցօր աւելացում»,

բ/ «Ըլնմատարաններով յարձակութեան զէնքի անսխաղէպ կուտակում»,

գ/ «տիրահազակ ահաբեկչական կառույցների հետ սերտ կապ ունեցող վարձկանների օգտագործում»,
դ/ «կայնահարող մարդասպան Սաֆարովի փառաբանում Ատրպէյճանի ղեկավարութեան կողմից»:

Հայից մինչեւ Հայի Հայը ընկած ճանապարհին, որը ոչ թէ տարածութիւն չափող քիլոմետրերով է հաշուուում, այլ գիտակցական խորութեամբ, մենք որակապէս պետք է փոխուենք, այսինքն՝ ճշտուենք, շտկուենք, ուղղուենք... Ամբողջ միջնադարում մեր մատենագիրները նոյն էին աղաղակում, մենք հեռացել ենք ճշմարիտ ճանապարհից՝ դրանով էլ պայմանաւորուած են մեզ պատուհասած աղէտները: Աղէտները ազգային ողբերգութիւններն էին, որոնց դառնակակիծ գոյժը մեզ էին հասցնում իրենց ժողովրդի ցաւից ճենճերացող եւ այդ ցաւը պատմութիւն դարձնող պատմագիրներն ու ժամանակագիրները՝ բոլորն անխտիր, անուն առ անուն, մատենան առ մատենան....

Մենք շեղուեցինք ճշմարտութիւնից, կորցրեցինք բնական հաւասարակշռութիւնը, թեքուեցինք եւ, ինչպէս սիւն, տապալուեցինք, փշուր-փշուր եղանք: Հեռացանք ինքներս մեզանից, դարձանք ուրիշ: Մեր ընկած տեսակը սկսեցինք սփրել, սկսեցինք մենք մեր անկ-

եալ վիճակից խորշել եւ հեռանալ ու հեռանալ ինքներս մեզանից: Մտանք ուրիշի, անգամ թշնամու ապահով պետութեան, գործող լեզուի, մինչեւիսկ հաւատի մէջ, օտարացանք, երբեմն դարձանք նաեւ մեր տեսակին թշնամի:

Մեր ազգային անկումը դարձաւ Հայի մեր կերպարի խաթարման պատճառ, ձեւախեղման նախադրեալ, եւ մեր ազգակիցների զաւակներն ապահովութիւն եւ արժանապատուութիւն որոնելու հեռանկարով հեռացան Արարատից: Հեռացան, հեռացան եւ դեռ հեռանում են: Մենք, որ քանակապէս պիտի աճէինք ու շատանայինք մեր հայրենիքում, չաճեցինք ու չշատացանք, որովհետեւ կանաչ ոտքով ծաղիկն ու պտուղը թողնելով այնտեղ: Մենք մեր սերունդներին տուեցինք ուրիշներին, դարձանք ամառուայ ցամաքող գետ:

Եւ այսպէս՝ դարե՛ր շարունակ: Բիւզանդիայի հայահալած քաղաքականութիւնից սկսած, որ Հայոց արքայատոհմերն ու նախարարական տները կտրուեցին Հայրենի հողից եւ վերաբնակեցնում իր երկրի արեւելեան տարածքներում, մինչեւ թաթար մոնղոլներ, մինչեւ թուրքեր, ովքեր եկան, եկան ու նստեցին մեր հողերի վրայ, տարան մեր աղջիկներին, կերան մեր հացը եւ ամէն ինչ աւարտեցին 1915 թուականի ցեղասպանութեամբ ու Հայոց Հայրենիքի բռնագրաւումով:

Որպէսզի այսուհետ մեր երկրում աճենք քանակապէս, որպէս ժողովուրդ պէտք է որակապէս փոխուենք՝ ճշտուենք: Որակապէս ճշտուած, ճշմարիտ Հայի կողքին կը կանգնի միւս արժանաւոր Հայը, եւ ոչ թէ ամօթից կը հեռանայ: Այսպէս, աստիճանաբար որակը կը դառնայ քանակ, հակառակ դէպքում քանակը այլեւս չի դառնայ գլխաքանակ: Իսկ դրա համար այսօր առանց յապաղելու մեզ անհրաժեշտ է ստեղծել ազգային առողջաջաման ծրագիր: Մեր փրկութեան միջուկը առողջ հանրային եւ ազգային կառույց ձեւաւորելն է: Տապալուած սիւնը միմիայն այդ ճանապարհով կարելի է ոտքի կանգնեցնել:

Այս երազանքը հեշտ չէ իրականացնել, որովհետեւ համաշխարհայնացման գործընթացներն օրըստօրէ փոխում են մարդու մտաւոր կշիռն ապահովող արժէքային համակարգերը: Արժէքային համակարգ է կայացած պետութիւնը, հաղորդակցութեան լայն շրջանակ ունեցող լեզուն, ժողովրդավարութեան ճիշտ սկզբունքներով կառուցուած հանրութիւնը, բարձր մշակութիւն, օրէնքի անխտրականութիւնը, մարդու ապահովութեան ու վստահութեան երաշխիքը, մասնագիտական պահանջարկ ունեցող կրթութիւնը, որակեալ եւ մատչելի բժշկութիւնը, աշխատանքը, վարձատրութիւնը, կենցաղը, ինքնամբ...

Արժէքային այս համակարգը ձեւաւորում է հասուն հանրոյթ, որի մէջ էլ ստեղծուում է մարդկային արժէքը՝ մարդը ինչ է, թէ ոչինչ: Մարդկային լիակատար արժէքները ձեւաւորում են միմիայն պետական, հանրային, ընկերային, մշակութային, անձնային հասուն միջավայրերում: Ահա այդպիսի

միջավայրերում անձնային պահանջներն իրականացնելու նպատակով մարդիկ հեռանում են իրենց կայանալու հնարաւորութիւնները կասեցնող, սահմանափակող, խոչընդոտող հայրենիքներից: Իրենց չկայացած պետութիւններից գնում են դէպի ապահովութիւն:

Փրկուում է անձը, հերթական կորուստն է կրում ազգը:

Ահա այստեղ է փոքր ժողովուրդների չկայացածութեան շարունակական կախուածութիւնը, ինչը համարժէք է ողբերգութեան: Զարգացած երկրները կասեցնում են զարգանալ փորձող երկրներին՝ նրանց ոչ թէ արտադրողի, այլ սեւ շուկայի կարգավիճակով դատապարտելով յաւիտենական յետամնացութեան:

Ի՞նչ է կատարում Հայ ժողովրդի հետ: Ժողովրդավարութիւնը, անկախութիւնը եւ անգամ Արցախի ազատագրումը ի՞նչ տուեցին նրան:

Հայութիւնը ոչ միայն չհամախմբուեց իր Հայրենիքում, այլեւ, ըստ պաշտօնական վիճակագրութեան, միայն 1991-2001 թուականներին Հայաստանից հեռացաւ մէկ միլիոն հարիւր հազարից աւելի մարդ: Այդ ընթացքը շարունակուեց նաեւ յաջորդ տասնամեակին՝ նոյն աղէտալի արագութեամբ:

Խորհրդային վերջին տարիներին Հայաստանը եւ Ղազախստանը ունէին երեք միլիոնից աւելի բնակչութիւն: 2011 թուականին Հայաստանում (Արցախի ու Զաւախքի հետ մէկտեղ) առաջին դասարան սովորելու է դիմել 37,000 երեխայ, Ղազախստանում՝ 260,000: Այս թուերն ինքնին ամէն ինչ ասում են, մանրամասնելու անհրաժեշտութիւն չկայ: Հայաստանի առկայ բնակչութեան իրական թիւը այդպէս էլ մեզանից զատնի է պահուում, անգամ նախորդ մարդահամարի տուեալները անյայտ մնացին: Իսկ Ղազախստանի բնակչութիւնը մօտենում է վեց միլիոնի: Անկախութեան Սեպտեմբերին՝ 1991-ին, առաջին դասարան էր յաճախում շուրջ 70,000 աշակերտ, այսօր՝ 20 տարի անց, դրա կէսն է: 1991 թուականին «Ալբերնարան» դասագիրքը տպագրուել է 69,000 օրինակ, 2011-ին՝ 37,000: Անկախութեան առաջին տարին դպրոցական էր աւելի քան՝ 600,000 աշակերտ, իսկ այսօր շրջանաւորում է 380,000-ը:

Ապարանի Մուլքի գիւղում ժամանակին եղել է երեք առաջին դասարան, այսօր առաջին դասարան է յաճախում երեք աշակերտ: Այս ողբալի պատկերն ամէնուր է: Հայաստանը աղետալիօրէն դատարկուում է:

Արտաշատցի գինուորական է: Ծառայում է ռուսական սահմանապահ զօրամասում: Տղային կրթութեան է տուել ռուս գինուորականների երեխաների համար նախատեսուած ռուսական դպրոցում: Տղան աւարտել է դպրոցը եւ հայերէն գրել, կարդալ չգիտի: Հայերէն տառերը չի ճանաչում: Հայրը շարունակում է՝ շուտով կ'աւարտեմ ծառայութիւնս, ընտանիքով կը տեղափոխուենք Ռուսաստան:

Հայը յարմարաւէտութիւն սիրող է, նկարագրով յարմարուող համակերպուող է, ինչն էլ նրան մղում է ապահովութիւն որոնելու: Հայրենիքից դուրս: Հայը չունի արեւելեան ժողովուրդներին բնորոշ ազգային եւ կրօնական մոլեռանդութիւնը, աւելի անձնապաշտ է, քան հրապարակային սիրանքի պատրաստ: Ինչպէս մարդը յան-

կարծ շոգում է մտքի սնանկութիւնից, այդպէս էլ ազգը նուաղում է նուիրումի անպատրաստ որդիների խեղճութիւնից: Դուրսեցրեցին ու ներսիները այնքան նսեմացրեցին պարզ Հայ մարդուն, որ նա անգամ իր մարդկային իրաւունքների պաշտպանութեան համար ոտքի չի կանգնում, էլ ուր մնաց թէ ընդվզի, բողբոջի, կռուի: Դարձել է չափազանց զգուշաւոր, վախկոտ ու հանդուրժող: Հակառակ դէպքում մէկ քիլոգրամը շուկայում նրա աչքի առջեւ էէր դառնայ 800 գրամ, էէր երթեկեկի ամօթալի պայմաններում՝ չնչահեղձ լինելու չափ իրար վրայ լցուած ուղեւորներ, երաժշտութիւն կոչուած խժալուր աղմուկի եւ իրար ետեւից ծխող վարորդի կշտամբանքների ուղեկցութեամբ: Դիմակայութեան ոգին շատ թոյլ է: Յանկարծ փորձի որեւէ ձեւով աւարկել կամ օրինական մի բան պահանջել՝ ծէսը սկսում է ինքնաստորացումից՝ էլ կեանքի՛դ մեռնեմ, էլ հոգո՛ւղ մեռնեմ, էլ ցա՛ւը տանեմ, էլ ախպե՛ր ջան... Ահա այս պայմաններում է, որ ճանապարհային աւտոտեսուչը դառնում է լիտիութեան մարմնացում, պետական պաշտօնեան՝ անօրինական գործարքների հմուտ վարպետ, դրամաշորթութիւնը՝ կենսակերպ: Հապա մի դրանց ֆաստնին նայէք: Եւ չկայ մէկը, որ զայրոյթից ձեռքը խփի սեղանին ու ասի՝ այս ի՞նչ էք անում, այս ո՞ւր հասանք:

Ելի յոյսը Հայը Հայի վրայ է: Նրա՛, ով կ'ընդվզի, բայց կը մնայ մէն-մենակ. բոլորը մտքով նրա կողմնակիցն են, բայց հրապարակաւ չեն պաշտպանի, ինչու վատամարդ դառնան: Հայն իր հայրենիքում այնքան է ստորացուել ու բարոյական կաշկանդումներին կենթարկուել հայրենի իշխանութիւնների կողմից, որ իր համար կենսակերպ է դարձել «Լուռութիւն ոսկի է» զգուշաւոր իմաստութիւնը:

Իսկ եթէ մի գեղեցիկ օր էլ Հայի Հայը յոգնի ինքն իրենից եւ կողքին կանգնած Հային ու երեկուայ ու այսօրուայ սփիւռքահայերին ասի՝ էլ չեմ ուզում հերոս լինել, էլ չեմ ուզում այս երկրի ժամապահ լինել, էլ չեմ ուզում հայրենասիրութեան բարոյական դասեր տալ, եկէք ինքներդ տէր կանգնէք Երկիր Նայիրիի դրսի ու ներսի սահմաններին, ի՞նչ պէտք է անեն, ի՞նչ պէտք է ասեն նրան... Երբեմն լինում է նաեւ այդպէս, եւ Հայի Հայը պարզապէս դառնում է Հայ, որպէսզի կարճ ժամանակ յետոյ դառնայ սփիւռքահայ, որի վերջնական արդարացումը հեռակայ հայրենասիրութիւնն է:

Այո՛, Հայութիւնն այդպէս էլ չի համախմբուում իր հայրենիքում: Ասել, թէ Հայը չի սիրում իր հայրենիքը՝ պատճառաբանութիւն չէ: Այս զարհուրելի տեղաշարժի դրապատճառներն այլ տեղ են, որ տեսանելիօրէն արտայայտուում են սոցիալական եւ բարոյական ոլորտներում՝ գործազրկութիւն, չնչին աշխատավարձ, վայրենի բարոյական միջավայր, մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող բարքեր: Ազգային գոյավիճակի այս համընդհանուր թշուառութիւնից իւրաքանչիւր ոք էլք է որոնում՝ ով ինչպէս կարող է: Մէկը քաղաքական ապաստան է խնդրում, միւսը հողին է ծախում որեւէ աղանդի, երրորդը մեկնում է արտագնայ, բայց անվերադարձ աշխատանքի՝ իր հետ տանելով նաեւ

ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԼԵՌՆԵՐԸ

Շարունակում է 14-էն

չուլթեան անպաշտօն հրաւերով, արուեստագէտը առաջին անգամ Ստեփանակերտի մէջ կը ցուցադրէ իր ամբողջական գործերը: Այստեղ իրեն կը թելադրուի հանրութեան համար ստեղծել կոթող մը որ արտայայտէ Արցախցիին կամքն ու մխացող ձգտումները: Հուսկ հիմնական գաղափարը կը ծնի աւելի մեծ մաշտաբով Ղարաբաղի մէջ յուշարձան մը կանգնելու: Իր Ղարաբաղցիներ պղնձաձոյլ արձանը կը դառնայ նոր յուշարձանին մեկնակէտը, իսկ պատուէրը իրագործելը կը տեւէ երկու տարի: Վերջապէս 1967-ին կը ծնի Մենք ենք մեր լեռները (տուֆ) յուշարձանը, որ կը տեղադրուի Ստեփանակերտէն դուրս, ամալի եւ անշուք բլրակի մը վրայ: Մենք ենք մեր անուանումը խոտոր կը դաշի Ազերի ղեկավարութեան ակնաչիւն եւ կը քննադատուի: Պէտք է յիշենք նաեւ որ Սովետական անծայրածիր կայսրութեան մէջ նման ազգամիջեան խնդիրները, այդ առեւ, կը լուծուէին տարբեր եղանակով: Մեզմացնելու համար կիրքերը եւ ամոքելու համար Ատրպէյճանի ղեկավարութիւնը, 1969ին ի պատիւ ԲԱՀխարհամարտի գոհուածներուն արուեստագէտը կը պատրաստէ յուշարձան՝ նուիրուած Չարախիլուի գոհերուն, Չարախիլուի մէջ, Ատրպէյճանի Հանրապետութիւն:

«Մենք ենք Մեր Լեռները» յուշարձանի հեղինակն է Մկրտիչ Մկրտիչեան

ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ԼԵՌՆԵՐԸ

Այս կոթողը ունի կրակոտանային նիստ մը, գետեղուած ճամբուն եզրին, ամալի բլրակի մը վրայ Ստեփանակերտէն քիչ հեռու, այդ առեւ խոտալուի (այժմ Իվանեան) ճանապարհին:

Պաղտասարեանի հայրը Իվանը՝ արհեստով շինարար էր եւ քարկոփ: Իր հօրմէն ժառանգած շինարարական փորձառութիւնը իրեն կ'ընծայէ կոթողային խնդիրները լուծելու կարողութիւնը: Քանդակն ունի պեթոն-ի եւ տուֆ քարի երեսապատուած միաձոյլ շէնքի կառուց: Այս ծանր կրակոտանային գանգոտուած իր անուանակոչութեամբ կը կրէ նաեւ խորհրդաւոր գաղտնիքներ: Այր եւ կին են մարմնապէս մինչեւ իրենց վիզերը թաղուած մակերեսէն վար, անոնց ոտքերը կը դաշին հողի ընդերքին: Իրենց այս դիրքը դիտորդին կ'ընծայէ մեկնաբանութեան ընտրանքը, աւագախորտի կամ վերջնական յարուսթեան:

Անոնցմէ խլուած է ձեռքերու արտայատուցութիւնը: Լուռ են, կնոջ բերանը փակ է հինգ աստիճան կապով մը, մինչ այրինը՝ հագիւն շնչարեւի: Անոնց արտայայտութիւնը նաեւ ունի Մոնա Լիզայական խորհրդաւորութիւն: Տանջուած եւ համբերող կը թուին ըլլալ, սակայն ունին հեղնական ժպիտ մը ժամանակաւոր այս կացութեան նկատմամբ: Օտար դիտորդին համար, առանց տեղւոյն պատմութիւնը իմացած ըլլալու, հաւանական է, որ պիտի նոյնացուէր Չատկեան կողմնակողմ ծովափին շարուած, կամ ալ Նեմրուի Լեռան ցիր ու ցան գգեստուած դիւցազնեան գլուխներուն:

Կոթողին տեղադրումն ու արտայայտչական ընտրութիւնը, ինքն ըստ ինքեան, կը թուին ըլլալ արդիւնքը բծախնդիր ծրագրա-

ւորմանը իր խորհրդատու պատուիրատուներուն:

Գործածուած է չափազանց զգուշութիւն ժամանակակից Ազերի վարչակազմը որեւիցէ կերպ չզրգոտելու, միեւնոյն ատեն ամբողջութեամբ կարենալ արտայայտելու համար Արցախցիին խոր ձգտումները: Այս պատճառով իսկ տեղացիին գայն անուանած է Պապիկն ու Տատը:

ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ԿՈԹՈՂԻՆ ՈՅԺԸ

Յետ Ստալինեան քանականներու տխուր որոշումին՝ Ղարաբաղը Ատրպէյճանին իշխանութեան յանձնելէն ետք, տեղւոյն հայութիւնը երբեք չէր հաշտուած այս բիրտ կացութեան: Երկար տարիներ սպասողական դիրքի վրայ մնալէ ետք գանազան պարագաներ պատճառ դարձան, որ ժողովուրդը դրսեւորուեալ իր գոյութեան ցասումը: Ծատ անգամ, լոկ արուեստի միջոցով արտայայտութիւն մը, բազմիցս աւելի ազդեցիկ կ'ըլլայ քան քաղաքական արիւնայի պոթկոմները:

Ահաւասիկ այս կոթողը, իր ժամանակին, արցախցիին կամքին խաղաղապաշտ արտայայտութիւնը եղաւ ուղղուած Ազերի համակարգին:

Իւրաքանչիւր նման կոթող, նախ քան իր վերջնական ընդունելութիւնը, առանց բացառութեան, միշտ կ'անցնի երկուսէ մը: Նոյնիսկ էիֆէլի աշտարակը ունեցած է Վիքթոր Հիւկոյի նման անուանի հակառակորդները: Այս կոթողի պարագային, գեղագիտականէն շատ հեռու՝ եղած է եւ տակաւին կը մնայ քաղաքականը:

Նախ Արցախցիին, ապա արուեստագէտը, իր պատուիրատուներով հանդերձ, բացումէն միայն 24 տարիներ ետք, անոր ընդմէջէն, տեսան Ղարաբաղի անկախութիւնը: Ասիկա չիրաւի կարելի է սեպել մեծ յաղթանակ մը: Սակայն, այս կոթողը տակաւին սպասման մէջ գտնուելու լուրջ պատճառ մը եւս ունի: Միջազգային քաղաքական հանրութիւնը այնքան ատեն որ տակաւին կը մնայ տարտամ եւ չի ճանչնար Ղարաբաղի ամբողջական անկախութիւնը, այս կոթողը պիտի շարունակէ իր սկզբնաւորած առաքելութիւնը:

Քանի մը օրեր առաջ, Ղարաբաղը տօնեց իր անկախութեան 22-րդ ամեակը: Նորածին հանրապետութիւնը դարձաւ մանուկ, ապա պատանի, իսկ այժմ արդէն թեւակոխած է իր երիտասարդութիւնը: Այս տարեփոխութիւնը դէպի ճանաչում խոստումնալից է եւ այս կոթողը համբերութեամբ կը սպասէ այդ մեծ պահուն՝ ամբողջացնելու համար իր իսկ առաքելութիւնը, որուն համար ի սկզբանէ կոչուած է:

Վստահօրէն, միայն այդ հանգրուանէն ետք, Պաղտասարեանի այս կոթողը պիտի ստանայ նոր շուք եւ թարմ կոչում: Փոխան իր աննշան եւ ամայացած դիրքին պիտի դառնայ կիզակէտ եւ բարգաւաճ հաւաքատեղի մը բոլորին համար, իսկ յատկապէս Արցախցիին ինքնավստահութեան եւ կամքի ուժի մկրտութեան եւ երդման վայր:

ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Նման կոթողներու հեղինակներու հանդէպ ժողովուրդներու գնահատանքն ու երախտագիտու-

ԿԻՄՐԻԻ «ՕԳԹԵԹ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ»Ը

Շարունակում է 14-էն

վերածուեցան»:

Բայց ամենէն ուրախ եւ երջանիկ էին ուսուցիչներն ու աշակերտները այս դպրոցին, որ կառուցուած էր Հայաստանի նշանաւոր «տուֆ» քարով: Դպրոց յաճախող 120 աշակերտներէն 35-ը ցոյց տուին իրենց բացառիկ տաղանդները՝ մեկնաբանելով Հայ երգահաններու գործերը: Երիտասարդ աշակերտուհի Դադիանա Միքայէլեան մեծ ուրախութեամբ ըսաւ. «Նախապէս, մենք շատ կը մսէինք՝ փչող հովին պատճառաւ: Այսօր, շատ հանգիստ ենք եւ պիտի շարունակենք հետեւիլ մեր շատ սիրած ճիւղին»:

* * *

Էտուրը Մարտիկեան, գաւազ կը առասպելական գործարար եւ բարեգործ էտուրը Մարտիկեան երէցի, կը շարունակէ իր հօրմէ ժառանգած առաջնորդութիւնը թէ հայկական եւ թէ ամերիկեան համայնքէն ներս: Մարտիկեան Հիմնադրամը գլխաւոր օժանդակողը եղած է Առաջնորդարանի Կրօնական Դաստիարակութեան Բաժանմունքի կողմէ կազմակերպուած ուսուցիչներու պատրաստութեան «Մարտիկեան Հիմնարկ»ին, Արարատ Կեդրոնին, Առաջնորդարանի

Երիտասարդական եւ Կրթական Բաժանմունքին, ինչպէս նաեւ Մեծագոյն Տիթրոյթի իրենց ծովափին՝ Յովհաննէս Մկրտիչ Եկեղեցւոյ:

Մարտիկեան Հիմնադրամը, առաջնորդութեամբ էտուրը եւ ձանձթ Մարտիկեաններու եւ իրենց գաւակներուն՝ Մարթիույի եւ Կրանթի, գլխաւոր բարերարներն են ՀՕՖ-ի Երեւանի Մանուկներու Կեդրոնին, եւ 2012-ին յանձն առին հովանաւորելու աղքատիկ Տաւուշ շրջանի համար ՀՕՖ-ի կազմած «Աղքատութեան կեանքի ընթացքը բարելաւել» ծրագրին:

Իսկ ամերիկեան համայնքին ի նպաստ՝ Մարտիկեան Հիմնադրամը մեծ օժանդակութիւն բերած է Միշիկընի շրջանի հիւանդանոցներու, գրադարաններու եւ կենդանաբանական պարտէզներու, ինչպէս նաեւ Միշիկընի Համլարանին, «Մայօ Գլինիքին», Կենդանիներու Ազատման Լիկային եւ Մարդկային Ընկերութեան:

Էտուրը Մարտիկեան համեստութեամբ բացատրեց. «Իմ ծնողներս մեզի սորվեցուցին վերադարձնել: Այս երկիրը շատ լաւ գտնուեցաւ իրենց հանդէպ, եւ ուրեմն անոնք ուզեցին վերադարձնել, գլխաւորաբար Հայկական համայնքին եւ ինչպէս նաեւ ամենուր»:

Ֆ.Ա.

թիւնը բազմազան են: Մինչ մին անմահացուցած է գործ մը իր հեղինակին անուամբ, ուրիշ մը կ'ընտրէ մնալ անտարբեր, կամ ալ կը մոռնայ նոյնիսկնքն հեղինակին ինքնութիւնը:

Վենետիկի Ռիալթօ կամուրջը եղած է արդիւնքը ճարտարապետական մրցոյթի մը, որուն մասնակցած են ժամանակակից տիտաններ, ինչպիսիք են Միքելանճելօն, Փալլատիօն, Սանսովինօն: Սակայն, աննշան մնացած ճարտարապետ մը Անթոնիօ տա Փոնթէն եղած է անոր յաղթական հեղինակը:

Նշեմ նաեւ աւելի յոռեգոյն օրինակ մը: Վերելը նշուած մայրաքաղաքներուն շարքին կայ նաեւ Մոսկուան: Քրէմլինի նշանաւոր Սբ. Բարսեղի պապըն գմբէթներով տաճարը հնուց եղած է խորհրդանշիշը Ռուսաստանի մայրաքաղաքին: Կ'ըսուի որ առ ի գնահատանք այդ բացառիկ գործին, պատուիրատու Յարը՝ այսպէս ճանցուած Իվան Ահարկուն, Եաքոբէ ճարտարապետ եղբայրներուն աչքերը կուրցնել կու տայ, որպէզի անոնք երբեւիցէ չկարենան նման տաճար մը կրկնել:

Մենք մեզ համեմատելով այլ ազգերու հետ, ցաւօք հայ ազգային գիտակցութեան մէջ ժողովուրդին սպասարկու բարձրագոյն մակարդակի հեղինակներու հանդէպ ըստ արժանուցն գնահատանքը տակաւին կը մնայ սաղմնային մակարդակի մէջ: Այսպէս լաւագոյն պարագային, հաւանական է որ այս յօդուածի ընթերցողներէն աննշան տոկոս մը միայն իմացած ըլլար Սարգիս Պաղտասարեանին մասին:

Արցախը խորհրդանշող իւրաքանակայն այս քանդակը ծնած է հայ ժողովուրդին երկուսէն եւ ներշնչած համայն ժողովուրդը, ներառեալ Հայաստանի եւ սփիւռքի հայութիւնը, մարտնչելու ի գին յոռեգոյնին, մինչեւ յաղթանակ:

Այսօր այս կոթողը խորհրդանշին է եւ ուրոյն կնիքը Արցախի Հանրապետութեան: Եթէ նկատենք անկա տեղ կը գրաւէ ճիշդ կեդրոնը պետական գիւնաշանին, գոր իւրաքանչիւր Արցախցի գիտուր կը կրէ իր պատուարժան գլխարկին եւ ուսին վրայ:

Թող արուեստաբանները վիճին այս գործին ծաւալի խախտումներուն, անոր տեղադրութեան վայրին, կամ անոր շինանիւթի ընտրութեան կամ թէժ արտայայտչութեան մասին: Պարզապէս, հանրութեան կողմէ անոր ընդունելութեան կամ յաջողութեան բարձրագոյն չափանիշը կարելի է սեպել, եւ նկատելիօրէն սփիւռքի կողմէ, անոր լուսանկարներուն վերաբարտարութեան թիւը մամուլի էջերուն մէջ:

Այս Սեպտեմբերի հինգին, Սարգիս Պաղտասարեանի ծննդեան իննսունամեակն էր: Ըստ սովորութեան, այս առթիւ, ի բաց առեալ Երեւանէն, մեր մշակութային եւ քաղաքական մարմինները եւ յատկապէս մամուլը մնաց իր թմբիրին մէջ հանդէպ իր ազնիւ արուեստագէտին, որ ստեղծագործեց գլուխ գործոց մը, ուրոյն ժողովուրդին իղձերուն եւ ներշնչումին համաձայն:

Յետ այսու, փափաքելի է որ իւրաքանչիւր առիթով երբ ըլլանք Մենք ենք Մեր Լեռները կոթողին առջեւ, գտնուինք դէմ յանդիման Արցախի գիտուրին գիւնաշանին՝ կամ պարզապէս նկարին, գիտակցինք անոր հեղինակին ինքնութեանը, ինչպէս կ'ընենք, երբ գտնուինք Երուսաղէմ Քոչարի կամ Մարտիրոս Սարեանի նման մեծ արուեստագէտներու գործերուն առջեւ:

Սարգիս Պաղտասարեանը իր գիտակցի կենդանութեան ընթացքին մեզ ազգովին ըրաւ իրը, իսկ մենք այժմ երախտագիտութեամբ պարտինք ճանչնալ գինք՝ իբրեւ լիբրաւ մերը:

ՄԵԾ ՄԱՅՐԱ

Շարունակուած էջ 16-էն

ուել: Մեծ մայրս մեզ սովորեցրել էր «Հայր Մերը» մեր փոքր տարիքում: Նա ունէր շատ փոքրիկ ձեռքի աղօթագիրք, որը միշտ իր հետ եկեղեցի տանելով՝ անգիր գիտէր գրքի պարունակութիւնը: Նա գրել, կարդալ չգիտէր, բայց նայելով գրքի էջերին, կարդում էր կամ ասում էր էջի աղօթքը՝ տեսական յիշողութեամբ: Նա խօսում էր միայն թրքերէն, հայերէն չգիտէր (կեսարացի կամ «Պայտերի» էր): Մեր ծնուած օրից մենք գիտէինք եւ նրա հետ խօսում էինք թրքերէն եւ յետոյ միայն հայերէն մեր ծնողների հետ: Մեր հայրենիքում մեծ մայրս ամենաընկճուած կինն էր դարձել: Նա չէր կարող առաջուկ սովորութեամբ աղօթել եկեղեցում եւ թրքերէն խօսել: Նրան խիստ կանաչաուռ էին ու կը պահարկէին: Մէկ օր, ես ստիպուած էի սիրելի մեծ մայրիկիս չմերժել եւ նրան եկեղեցի տանել: Եկեղեցիներէ շատերն արդէն աւերել էին եւ եղածներն էլ հեռու անկիւններում էին: Այնտեղ գնալու էինք հանրակառքով, որը երեւում էր ժամը մէկ՝ խցկուած բազմութեամբ: «Կը տանեմ քեզ, մեծ մայր», - ասացի ես նրան, «Միայն մէկ բառ անգամ չխօսես հետս»: «Էջերիմ դըզըմ», - ասաց նա: Կիրակի առաւօտեան ես գլուխս փաթաթեցի բրդեայ գործուած կոպիտ շալի մէջ եւ գնացիք եկեղեցի: Քայլելու քիչ տեղ կար մինչեւ եկեղեցի հասնելը: Ես արագ-արագ նորից կրկնեցի մեր պայմանը, եւ նա գոհ ժպտաց: (այդ օրը նա մագերին նաւթ չէր քսել): «Ղորիմա դըզըմ» (մի վախնար աղջիկս), - ասաց նա եւ թեւանցուկ խցկուեցինք եկեղեցու պատերից ներս: Մեծահասակներ էին ներսում եղածները, բայց ես ասել էի մեծ մայրիկիս, որ այնտեղ լրտեսներ կը լինեն անպայման եւ չպէտք է իմանան, որ ես դպրոցական եմ: Լաւ է, մեծ մայրս քարացած նստած՝ մտքում էր աղօթում, եւս չտեսայ անգամ նրա ձեռքով խաչակնքելը: «Կէտեք», (գնանք), շշմարտի նրա ականջին եւ մենք դուրս եկանք քրտնած, շոգ բաղնիքից ազատուած ի պէս: Դրսում ես շարունակում էի շշուկով խօսել եւ յաճախ ետ էի դառնում, որ տեսնեմ մեզ հետեւող կայ, թէ ոչ:

Մեծ մայրս թրքախօս էր, բայց մենք գիտէինք, որ նա ծնուել եւ ապրել է հայերի երկրում: Թէ ինչպէ՞ս էր եղել այդ մեզ չէին բացատրում կամ խօսում մեզ հետ որեւէ շարքի շուրջ: Միայն հետագայում էր, երբ ես անկուշտ քաղցածի պէս պահանջ էի զգում տեղեակ լինելու մեր հայ ժողովրդի պատմութեանը, իմ ծնողների ապրած երկրի եւ իրական եղելութիւնների մասին: Դպրոցներում ուրիշ պատմութիւններ էին դասաւանդում, հայ դպրոցականները ոչինչ գիտէին մեր ազգի պատմութեան մասին: Համալսարանում սովորելու տարիներին տեղեկացանք, որ դասաւանդուելու է «հայ ժողովրդի պատմութիւն» առարկան: Անչափ ուրախութեամբ սպասում էին այդ պահին...

Վերջապէս ներս մտաւ ընտրեալ professor-ը: Նա չափազանց մաքուր տեսք ունէր՝ հագին ճերմակ բրդից հիւսուած ձմեռային պատմուճան էր (sweater) եւ մագերը օձուած իւրով՝ կոկիկ ամառուածքով, բարի տեսքով արեւմտահայ էր: Նա մէկ ոտքին բարձր դիրք տուեց՝ դնելով այն աթոռի տակամասի փայտաճաղին եւ սկսեց... նրա ձայնը,

նորաստեղծ բառերի ընտրութիւնը, արտասանելը, պատմելու ոճը, ճարտարագիտի վարպետութիւնը, նիւթը մեղրի պէս ծորում էր աներեւոյթ հզօրութեամբ եւ մենք՝ վաթսուն ուսանողներս նստած լսարանում՝ չէինք շնչում, քարացել էինք: Մենք տեսնում էինք խօսողի նկարագրածները՝ Տիգրան Մեծ հայ թագաւորի հզօր ուժը, խոշոր, շքեղ քաղաքի՝ Տիգրանակերտ մայրաքաղաքի կառուցումը քանհինգ մեթր բարձրութիւն ունեցող պարիսպներով, պարսպից դուրս արքայական պալատներով ու պարտէզներով: Յիշում եմ, հենց այդ պարտէզների ինքնամոռաց նկարագրութեան պահին էր, երբ լսարանի դուռը բացուեց եւ դասախօսին դուրս հրաւիրեցին: Դա էր... նա այլեւս չվերադարձաւ. մենք երբեք չսովորեցինք մեր ազգի պատմութեան մասին: Մենք լսեցինք, որ գիտնականին կրկին ուղարկել էին իրեն եկած տեղը՝ Սիպերիա...

Մեծանալով եւ հասակ առնելով հայրենիքում, ես շատ բաների մասին էի մտածում: Գիտէի, որ բոլորն ու կենդանիները տարբեր պայմաններում մահանում են ու անհետանում աշխարհի երեսից: պատկերացնում էի, որ մարդիկ պէտք է, որ աւելի ուժեղ ստեղծուած լինէին, քանի որ նրանք կարողանում էին դիմանալ ստեղծուած նոր պայմաններին եւ սովորել դառնում: Մեր ընտանիքի պատմութիւնը տալիս էր այդ օրինակը: Մեր մեծերը քանի անգամներ էին կառուցել տներ իրենց համար, քանի անգամ էին տեղափոխուել մէկ երկրից միւսը, ապրել են լաւ, վատ պայմաններում, ուրախացել են եւ տիրել, հալածուել են, ջարդի տարուել, փրկուել են... Մարդուն մէկ կեանք է տրուած այս աշխարհը ստեղծողի կողմից: Նրանք արդէն ապրել էին մի քանի կեանքներ անկալուն՝ որբացած երխաների պէս: Իսկ հայրենիքը, ուր հայերէն էին խօսում եւ հայերի երկիրն էր համարում, կարծէք առաւել էր... Այն օտարի հսկողութեան տակ ճնշուած՝ ազատ չէր շնչում նոյնպէս: Մարդիկ, իրօք, դիմանում են: Հետաքրքիր է՝ ինչպէ՞ս է, որ հսկայ տայնաստրները ոչնչանում են պայմաններին չդիմանալով...:

Մեծ մայրս իր ոսկեշրջանակ ակնոցը թաքցրել էր, մետաքսեայ ընտիր հագուստները նոր էին մնացել՝ առիթը չէր եղել հագնելու. ես էլ գիտակցում էի արդէն, որ մենք աղքատ չէինք եւ դեռ ունէինք մեզ հետ բերած սուրճ, շաքար, իւղ, մեծ մայրս աւելի սրտանց էր անում իր առաւօտեան եւ գիշերային աղօթքները, եւ ես նրա շշուկները մէջ լսում էի աղերսանքի խօսքեր թրքերէն եւ «Սիպերիա» բառը: Ես ամբողջութեամբ հասկանում էի նրան: Նա ուզում էր ասել՝ «Ալլախ, դուրթար բիգի բուրդան», (Աստուած փրկիր մեզ այստեղից), մարդիկ չեն դիմանայ այդ հեռուում, երբ հսկայ կենդանիներն էին տեղի տուել... (այդ շաքար մեր փողոցից տարել էին ամենատարախ յունահայերին, որոնք իրենց աղքատութեան մէջ էլ չէին մոռանում երգել ու փանտօնուագելով երջանկացնել իրենց):

Մեծ մայրս երազում էր իր Միջերկրականի վիլլան, ես՝ նոյնպէս: Եթէ իմ մէջ մնացել էր գեղեցիկ, ծփացող շող ինձ ուժ տուող, այդ տունն էր իմ ծննդավայրի՝ ինձ տուել: Չնայած յուշ էր այն, բայց տեսնելի էր, յուսադրող, միշտ ներկայ:

«ՐԱՅԸ», «ՐԱՅՆ ՈՒ ՐԱՅԸ» ԾԱՆՕԹ ԵՆ ՄԵԶ

Շարունակուած էջ 17-էն

ընտանիքը, չորրորդը իբր ընտանիքի միաւորման պատրուակով ճեղքում է շղթան...

Հայ մարդը իր ներկայ ու վաղուկ օրը չի կապում Հայոց Հայրենիքի հետ: Անգամ ազգային նկարագրի ու մայրենի լեզուի կորուստի հաշուին պատրաստ է փրկել իր մէջ թաքնուած մարդարածին, ով այս դէպքում նրա համար ազգութիւն չի ճանաչում:

Եւ այսպէս դարեր շարունակ հայոց արիւնը տարածուել ու նստուածք է տուել աշխարհում: Թուրքը, ատրպէյճանցին, վրացին, քուրդը, արաբը, իմանալով, որ իրենց տատը Հայ է, գաղտնի են պահում, ամաչում են հանրօրէն ընդունել եւ միայն նեղ շրջանակներում են խոստովանում: Այդպիսի փաստերը շատ-շատ են: Ի՞նչ է, մի՞թէ այդքան ամօթ է Հայկական ծագում ունենալը կամ Հայ լինելը:

Պարտութիւններ շատ ենք կրել, շատ ենք տրորուել, մեզ ստորացրել են եւ վիրակտրել են մեր ազգային արժանապատուութիւնը: Ես այդպիսիներն չեն սիրում, չեն ընդունում, արհամարհում են եւ հերթական անգամ նսեմացնում:

Եւ այսպէս... Եւ այսպէս, երբ Հայերը հեռանում են Հայրենիքից, մնում է հարազատների ու ծննդավայրի կարօտը:

Երբ կարօտը կամաց-կամաց ցնդում է Արարատի գագաթին իջած մշուշի նման, մնում է մայրենի լեզուն:

Երբ օտար աշխարհում անգամ ընտանիքում մայրենի լեզուն տեղը գիշում է տուեալ երկրի լեզուին, մնում է հաւատը:

Երբ կորցնում են հաւատը, մնում է ազգային ոգին:

Երբ կորցնում են ազգային ոգին, մնում է ազգային յիշողութիւնը:

Երբ կորցնում են ազգային յիշողութիւնը, մնում է աւանդոյթը եւ սովորոյթը:

ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆԻ ՄԱՅՐՈՒՄ 3-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Շարունակուած էջ 14-էն

յարաբերութիւնները աւելի սերտացան:

Երեկոյից յետոյ ես նրան ընտանեօք ուղեկցեցի «Red Lion» հիւրանոց, որի բակում, երբ հրաժեշտ էինք տալիս իրար, նա համբուրեց ճակատս եւ ասաց «Վահան, անչափ շնորհակալ եմ քեզմէ: Մինչեւ հիմա ինձի ոչ մէկը այսպէս պատիւ չէր տուած, շատ յուզուած եմ: Շատ-շատ շնորհակալ եմ եւ երբեք չեմ մոռնար ասիկա»: Տիկինը՝ Շըրլին և տղան՝ Կարապետը նոյնպէս շնորհակալութիւն յայտնեցին համբուրելով ինձ: Ես յուզուած էի: Պատասխանեցի, որ ես իմ

Երբ կորցնում են աւանդոյթն ու սովորոյթը, մնում է հեռաւոր մի ազգակ, որ նրանց երբեմն-երբեմն չի շեղում է իրենց ծագումնաբանութիւնը:

Երբ Հայերը կորցնում են իրենց ծագումնաբանական յիշողութիւնը, մնում են նախնիներից ժառանգութիւն մնացած ինչ-ինչ իրեր եւ պատմութիւններ, ինչը եւ առիթից առիթ ցանկութիւն է առաջացնում հանրագիտարաններում որոնելու «Հայաստան» բառաչօղուածը, իսկ քարտէզի վրայ գտնելու Հայաստանի տեղը:

Իսկ երբ Հայերը դադարում են կարօտել, երբ հեռանում են մայրենի լեզուից, հաւատից, ազգային ոգուց, ազգային յիշողութիւնից, աւանդոյթից ու սովորոյթից, մոռանում իրենց ծագումնաբանութիւնը եւ քարտէզի վրայ դժուարութեամբ են գտնում Արարատի տեղը, նրանք այլեւս Հայեր չեն... Վաղուց արդէն Հայեր չեն... Բայց սա ամենեւին էլ վերջը չէ:

Որքան էլ Հայը դառնայ ուռու, ամերիկացի, անգլիացի, ֆրանսաացի, գերմանացի, յոյն, թուրք, բուրգ, վրացի, այնուամենայնիւ խորքի խորունկ մի շերտում յիշում է իր Հայկական ծագման առասպելը: Այդպէս Նոյեան տապանն իջաւ Արարատից, ու շարունակուեց մարդկային քաղաքակրթութիւնը: Հայաստանն այսօր դարձել է Նոյեան տապանի պէս մի բան, որտեղից հեռանում են Արարատի որդիները: Եւ այսպէս կը լինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած եւ ժամանակակից երկիր: Առողջ երկիր:

Այդ յոյսն ու հաւատը իր մէջ պահում է ոչ թէ Հայը, ով ենթակայ է ամէն տեսակի ազգակործան գայթակղութիւնների, այլ՝ Հայի Հայը, ով, հակառակ պատմութեան հողմերի ու փոթորիկների, շարունակում է իր արմատները մխրճած պահել այս դժուար, այս չափազանց դժուար, բայց առասպելական ու երանելի հողի մէջ...

ազգային պարտականութիւնը կատարեցի, որից յետոյ մենք բաժանուեցինք:

Մարգիս Սողանալեանի մահուան 3-րդ տարելիցի առիթւ, այս կարճ գրութիւնով ես իմ եղբայրական ու ազգային պարտականութիւնն եմ կատարում նրա հանդէպ՝ խոնարհութեամբ ինչպէս յիշատակի առջև, որպէս միջազգային ասպարէզում անուրբ բարձր հնչած ՄԵԾ հայի: Աստուած մշտնջենական լոյսի մէջ պահի նրա շիրիմը: Սրտագին մաղթանքներս ընտանիքին ու հարազատներին, որ միշտ վառ պահեն նրա յիշատակը:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ
«Մասիս»ի հաւատաւոր ընթերցողներէն մին, գնահատելով մեր օրկանի բովանդակութիւնն ու քաղաքական ուղեգիծը՝ \$100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

www.massisweekly.com
updated every Friday

ՆԱՍԱԿ՝ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎԻՆ

Շարունակում է 7-էն

Առաք. Եկեղեցիին կը շնորհուր տանձնայատուկ հեղինակութիւն եւ յաւելեալ արտօնութիւններ ընկերային-հասարակական կեանքին մէջ, այլ՝ Եկեղեցին կամայ թէ ակամայ կ' ենթարկուէր եւ կը շահագործուէր նաեւ պետական քաղաքական ծրագիրներու իրագործման նպատակներով: Այսօր ալ շատեր կը մեկնաբանեն, թէ այս ընթացքով Եկեղեցին կը շեղի իր հոգեւոր-բարոյական, ընկերային-հասարակական ծառայութեանց կրօնաշունչ առաքելութենէն, դառնալով սպասուողը այն կուսակցութեան, որմէ կազմուած է ներկայի պետութիւնը: Բնականաբար, պետութեան ծառայելը ազգային սեպուհ պարտքն է իւրաքանչիւր քաղաքացիի եւ, այս իմաստով, Եկեղեցին ալ պիտի սատարէ պետութեան կայացման եւ ամրապնդման գործին: Այսուհանդերձ, ան պէտք չէ կորսնցնէ իր բուն դերը, քրիստոսահիմն, հետեւաբար՝ աստուածային հաստատութիւն մը ըլլալու նկարագիրը, եւ պահէ պետական-քաղաքական դրուածքէն ալ վեր հոգեւոր-բարոյական ներկայութիւն մը հանդիսանալու իր հանգամանքը, ոչ միայն պետական կառուցին, այլ՝ անխտիր ամէնուն համար:

Եկեղեցիին բարձրաստիճան դեկավարութիւնը պէտք չէ հաւատացեալներուն մօտ ստեղծէ այն թիւր տպաւորութիւնը, թէ Եկեղեցին պետութեան հետ իր համագործակցութեամբ դարձած է պետական կառուցի կցորդ եւ լծակ, կամ վատթարագոյնը՝ պետական ծրագիրներուն կարգախօսը: Կրկին տեղին չէ այստեղ թուարկել փաստեր, որոնք մօտաւոր անցեալին ուղղակի այն տպաւորութիւնը թողուցին հայ հասարակութեան լայն շրջանակներուն մէջ, թէ Հայաստանեայց Եկեղեցին եղած է յենակ մը ի նպաստ պետական կուսակցութեան շահերուն:

Հայց. Առաք. Եկեղեցին ազգային-ժողովրդական եկեղեցի է, որուն սուրբ աւագանին ծնած գաւախները ինչ ուղղութեան, ընկերային-հասարակական կեանքի, նաեւ քաղաքական համոզումներու որ հոսանքին ալ պատկանին, միեւնոյնն է, անոնք բոլորը Հայ Եկեղեցւոյ մարմնին անդամ են, որոնց Եկեղեցին իբրեւ գործակալութ մայր պարտի սիրով առաջնորդել իր գոգը:

Հակառակ իր ազգային-ժողովրդական եկեղեցի ըլլալու հանգամանքին, Հայաստանի մէջ Հայ Եկեղեցին պետական եկեղեցի չէ: Հայաստանի Սահմանադրութիւնն ալ արդէն պետութիւն եւ եկեղեցի անջատ սկզբունքը որդեգրած է, ընդունելով ու գնահատելով հանդերձ Հայց. Առաք. Եկեղեցւոյ «Ազգային բացառիկ առաքելութիւնը հայ ժողովրդի հոգեւոր կեանքում, նրա ազգային մշակոյթի զարգացման եւ ազգային ինքնութեան պահպանման գործում»: Այսուհանդերձ, թէ՛ հայրենի պետութեան եւ թէ՛ Հայ Եկեղեցիին համար բարի է որ իրարմէ անջատ մնան, բայց փոխադարձ պատկառանքով եւ խաղաղարար ոգիով մին սատարէ քաղաքացիներու բարօր կեանքին, իսկ միւսը նպաստէ անոնց հոգեւոր-բարոյական վերելքին: Եկեղեցին պէտք չէ ինքզինքին թոյլ տայ, իր հոգեւոր պատասխանատուութիւններէն դուրս, պետութենէն օգտուի

մասնաւոր իրաւունքներու ստացումով, իսկ պետութիւնն ալ զգոյշ պէտք է ըլլայ չօգտագործել հասարակութեան մէջ Եկեղեցիին ունեցած առաւելութիւնները իր ներքին եւ արտաքին քաղաքական ծրագիրներուն համար:

Անձկայրեաց պիտի ուզենք ակնկալել, որ մեր հայրենի պետութիւնը ըլլայ այնքան հեռատես եւ լուսամիտ, որ գիտնայ հաշտեցնել հայրենասիրութեան ոգին կրօնի ոգիին հետ: Որովհետեւ հաշտարար այս ոգին է, որ ազգը կը միացնէ Աստուծոյ՝ լուսեղէն գոյգ թեւերով գիտութեան եւ հաւատքին:

ՈՃԻՐ՝ Հոգիին դէմ

Կայ նաեւ ուրիշ ցաւոտ հարց մը, կոտտացող վէճ մը, որ Եկեղեցւոյ մարմնին վրայ պիտի չսպիտանայ, այլ՝ միշտ պիտի արիւնի, մինչեւ չբարեփոխուի անբնական երեւոյթը եւ արդարութեան վերականգնումով չսրբագրուի կոպիտ սխալը. այդ՝ քանի մը տասնեակ հոգեւորականներու «կարգալուծման» պարագան է:

Վերը ակնարկուած եկեղեցական ճգնաժամին անդրադառնալով պէտք է խոստովանիլ, որ անոր յառաջացման մէջ նաեւ կարեւոր դեր ունեցան իրարայայջորդ «կարգալուծում»-ները քանի մը տասնեակ հոգեւորականներու՝ սարկաւազներու, քահանաներու, աբեղաներու, վարդապետներու, եպիսկոպոսներու եւ արքեպիսկոպոսներու: Այս բոլոր «կարգալուծում»-ներուն առթիւ նման լուրջ վճիռ մը կայացնելու համար ծանրակշիռ ոչ մէկ պատճառ գոյութիւն ունէր: Մայր Աթոռի հրապարակած հաղորդագրութիւններուն մէջ նշուած կցկտուր մեղադրանքները նախ ապացուցուած եւ համոզիչ չեն, ապա անոնք բոլորն ալ մատնացոյց կ' ընեն որոշ կարգապահական խախտումներ, որոնք բոլորն ալ հիմք չեն ներկայացներ ենթակայները «կարգալուծման» ծանր պատիժին ենթարկելու: Այս ուղղութեամբ հայ հասարակութիւնը, որ սկիզբը այնքան ալ ուշադիր չէր Եկեղեցիին մէջ կատարուող ողբերգութիւններուն, սկսաւ հետզհետէ ընդվզիլ, քանի որ նախ երեւոյթը տգեղ էր ու անբնական, եւ երկրորդ՝ տրամաբանական չէր որ այսքան մեծ թիւ մը զոհերու սխալ ըլլալին, իսկ զանոնք զոհող անձը՝ շիտակ:

Կարգալուծ մէկ հոգեւորականն անգամ արդէն շատ է Եկեղեցիին համար. այս է մեր համոզումը: Կարգալուծումը ոճիր մըն է քահանայական կոչումին, հոգիին ու խղճին, նաեւ մարդկային արժանապատուութեան դէմ: Ինչ պաշտօնի կամ ով ուզէ ըլլայ, մարդ արարածը իշխանութիւն չունի ձեռնադրութեան եւ Ս. Միւռոնի օծման արարողութիւններուն ընդմէջէն քահանային Ս. Հոգիի ուղղակի փոխանցած վաւերական շնորհներէն զրկելու: Քահանայի կոչման, ձեռնադրութեան եւ օծման արարողութիւնները նուիրական են. անոնք կը ներկայացնեն Ս. Հոգիին ազդեցութեամբ ձեռնադրուող անձին անիմանալի եւ էական փոխարկութիւնը, այլ խօսքով՝ հոգեփոխութիւնն ու ներքին վերածնունդը: Իրագործուածը սրբագործութիւն մըն է, անիմանալի խորհուրդի մը կատարումը, բառին իսկական առումով, որ ունի անլուծանելի

լի եւ անկրկնելի նկարագիր: Ուստի, վաւերականօրէն օծուած քահանան «կարգալուծ» հռչակելը ինչ տեսակ «տնօրինում»-ով ալ իրականանայ, կը շարաբերականացնէ խորհուրդին նուիրականութիւնը, կ' արժեգրկէ անոր անձեռնմխելի սրբութիւնը ու կը գործէ աններելի մեղք մը՝ հայհոյելով Ս. Հոգիին դէմ: Հաւատք պէտք է ունենալ սրբութիւններու նկատմամբ եւ երկիրը՝ աստուածախօս պատգամին հանդէպ, որ կ' ըստէ. «Ամէն մեղք եւ հայհոյութիւն պիտի ներուի մարդոց, բայց Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւնը պիտի չներուի ոչ այս աշխարհիս մէջ եւ ոչ ալ հանդերձեալին »:

Կարգալուծ հռչակել բազմաթիւ հոգեւորականներ, Եկեղեցւոյ առաքելականութենէն զրկել ամբողջ համայնքներ, անվաւեր համարել թեմական եւ համայնքային կանոնադրներու հետեւողութեամբ ընտրուած վարչութիւններ, ապօրէյն յայտարարել գործող կառույցներ եւ մասամբ նորին, աննախադէպ եւ անընդունելի երեւոյթներ են, նաեւ միանգամայն անհամապատասխան՝ քրիստոնէական կրօնի եւ Եկեղեցւոյ առաքելութեան սիրոյ եւ խաղաղարար ոգիին հետ:

Վաւերականօրէն օծուած հոգեւորականը «կարգալուծ» հռչակել ուղղակի բարբարոսութիւն եւ նողկալի վայրագութիւն մըն է: Ան անակութիւնն է բարոյական գիտակցութեան եւ պարտութիւնը մարդկային բանականութեան, որ կը մերժէ օգտագործել դժուարութիւններուն առջեւ երկխօսութիւն ստեղծելու եւ բարի լուծումներ առաջարկելու քաղաքակիրթ բոլոր հնարաւորութիւնները:

Այո, «կարգալուծ» հռչակուեցան բազմաթիւ հոգեւորականներ, բայց անոնք չեղան «կարգալուծ», այլ եղան աւելի հոգեւորական՝ իրենց կոչումին գիտակցութեան, ծառայական անմնացորդ նուիրումին եւ գօրեղ հաւատքին մէջ: Անոնք ակամայ «արտաքսուեցան» Եկեղեցիէն, հայրենագուրդ դարձան իրենց հոգեւոր հայրենիքէն, բայց Եկեղեցին չարտաքսուեցաւ իրենց սրտէն, ու այդ հոգեւոր հայրենիքը աւելի ծաղկեցաւ, ճոխացաւ ու գեղեցկացաւ իրենց պատարագուած հոգիին մէջ:

Բենետիկտոս ԺԶ., 21 Յունուար 2009-ին, քահանայապետական պաշտօնական կոնդակով չորս եպիսկոպոսներու վրայէն վերցուց Եկեղեցւոյ հաղորդութենէն զրկուած ըլլալու վճիռը, առաջքը առնելով այն մեծ հերձուածին, որ 70-ական թուականներուն ստեղծուած էր Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ, Մարտէլ ԼըՖեյվր արքեպիսկոպոսով: Պիոս Եղբայրութեան պատկանող այս եպիսկոպոսներուն դէմ վերոյիշեալ վճիռը տրուած էր Յովհաննէս Պօղոս Բ.-ին կողմէ 1988-ին, հիմք ընդունելով այն փաստը, որ անոնց եպիսկոպոսական ձեռնադրութիւնը կը կատարուէր առանց պապական արտօնութեան եւ հակառակ Վատիկանէն եղած կանխազգուշացումներուն: Պիոս Եղբայրութիւնը այդ ժամանակ ունէր 600.000 հաւատացեալ անդամներ, 500 քահանաներ, 200 ճեմարանականներ, եւ կը տնօրինէր 86 դպրոցներ եւ երկու համալսարաններ: Հակառակ այս պատկառելի տուեալներուն եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ շարքերէն եղած բողոքներուն, Բենետիկտոս ԺԶ. իր հայրական կեցուածքով, իմաստութեամբ եւ բացառիկ հեռատեսութեամբ, ի նպաստ Կաթողիկէ Եկե-

ղեցւոյ ամբողջականութեան եւ միութեան պահպանման, հնարաւորութիւն տուաւ այդ եպիսկոպոսներուն եւ ուրիշ շատ մը ինտեգրիտներու վերադառնալու Մայր Եկեղեցւոյ գիրկը: Բայց այսպիսի մեծ նախաձեռնութիւն մը գործը կրնայ ըլլալ միայն մեծագործներու:

Վստահաբար «կարգալուծ» հռչակուած հոգեւորականներուն մեծ մասը, «Եկեղեցւոյ առաքելականութենէն» զրկուած համայնքներն ու բոլոր հաւատացեալները, որոնք հայոց լոյս հաւատքը ժառանգած են իրենց նախահայրերէն ու պապերէն եւ ոչ թէ ունէ մէկուն քմահաճութենէն, կը սպասեն հաշտութեան, կը չուսան արգարութեան կատարման ու հոգեբուխ կ' աղօթեն խաղաղասիրութեամբ, անչիշաչարութեամբ եւ արժանապատուութեամբ վերադառնալու համար իրենց Մայր եւ Ս. Եկեղեցիին գիրկը:

Կը հաւատամ առ Աստուած յոյսով ըլլալ եւ աղօթել, որ Հայց. Առաք. Ս. Եկեղեցւոյ եպիսկոպոսական այս ժողովը պարզապէս չի ծառայեր ամրագրելու սա կամ նա բարձրաստիճան հոգեւորականին դիրքը կամ շատցնելու անոր ոսկեգօծ գահին փայլքը, այլ՝ իսկապէս կը հանդիսանայ նոր արեւելում մը, վերատեսութեան ենթարկելու մեր աշխարհահայեացքը ի խնդիր հոգեւոր վերածնութեան, որով այսօրուան անկարելին վաղը կը դառնայ կարելի, անբեւեակայելի՝ երեւակայելի, իսկ անհաւատալին՝ ստոյգ իրականութիւն:

Ես խորապէս համոզուած եմ ու կը հաւատամ, որ Հայց. Առաք. Ս. Եկեղեցին իր հուլիսեան մէջ, դարերուն ընդմէջէն ցայսօր, մնացած է բիւրեղ ու մեծաւ մասամբ անփոփոխ՝ իր առաքելական ուղղութիւններու ժառանգութեամբ, ծիսական-պաշտամունքային կեանքի հոգեւոր անհամեմատելի գեղեցկութիւններով ու եզակիութեամբ, նաեւ իր հայկազուն հօտին ծառայելու ամբողջանուէր յանձնառութեամբ: Անոր համար է որ առկայ նամակին յառաջաբան ընտրեցի Յովհաննէս Երզնկացի Պլուզ վարդապետի Ս. Գրիգոր Լուսաւորչին ձօնուած ներբողի համապատասխան խօսքերը:

Երզնկացիին նման, բայց ժամանակով շատ աւելի նոր, եկեղեցական ուրիշ հեղինակ մը, որուն անձը եւ գործը ի տղայի տիոց սիրած եմ, Գարեգին Եպս. Սրուանձտեանցն է: Ան եւս Հայ Եկեղեցիին մասին նոյնքան գեղեցիկ եւ ճշմարտացի գնահատականով մը արտայայտուած է, որուն խօսքերը փոխարինաբար այս նամակին մէջ պիտի ուզեմ մէջբերել, արտայայտելու համար սրտիս գեղուն գգացումները.

«Եկեղեցին է հայրենիք մեր, ի նմա գտանեմք զլեզուն եւ քարտէզս եւ ի քարինս նորա դրոշմեալ անուանք, ժամանակք, անցք, յիշատակք անձանց բարեպաշտից եւ հայրենաշինից, անդ արքայք եւ բամբիշք, նախարարք եւ դըշխոյք, տեարք եւ տիկնայք, հայրապետք եւ վարդապետք, քահանայք եւ կղերիկոսք եւ ամենայն արք անուանիք»:

Յաջողութեան եւ արեւշատութեան սրտաբուխ մաղթանօք, Մատչիմ Աստուածահիմն Տաճարին եւ Մօրն Լուսոյ Սրբոյ էջմիածնի ի համբոյր՝ Դոկտ. Աբէլ Քհչյ. Մանուկեան